



ՀՀ ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ 26.11.2018թ. ԹԻՎ 1/808Ա ՈՐՈՇՄԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄ «Յուքոմ» ՍՊԸ Թողարկողի ֆիրմային անվանումը

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
Կազմակերպա-իրավական ձևը

**ՀՀ, ք. Երևան 0015, Գր. Լուսավորիչ 9
Հեռ՝ (+37411) 400 400, Ֆաքս՝ (+37411) 400 401
Էլ.-փոստ՝ info@ucom.am
Կայք՝ www.ucom.am**

«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ
Գլխավոր տեղաբաշխողի անվանումը

բաց բաժնետիրական ընկերություն
Կազմակերպա-իրավական ձևը

**ՀՀ, ք. Երևան, 0018, Տիգրան Մեծի 32/1, տ. 8
Հեռ՝ (+374 10) 53 87 00
Էլ.-փոստ՝ armenbrok@armenbrok.com
Կայք՝ www.armenbrok.am**

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:

<p>Արժեթղթերի տեսակը՝ Արժեթղթերի ձևը՝ Արժեթղթերի քանակը՝ Արժեթղթերի անվանական արժեքը՝</p>	<p>անվանական, արժեկտրոնային պարտատոմս ոչ փաստաթղթային համապատասխան Թողարկման ծավալի ու անվանական արժեքի 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար, 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ Դոլարային պարտատոմսերի դեպքում՝ առավելագույնը 10,000,000 (տասը միլիոն) ԱՄՆ դոլար,</p>
<p>Արժեթղթերի թողարկման ծավալը՝</p>	<p>Դրամային պարտատոմսերի դեպքում՝ առավելագույնը 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ և նվազագույնը մինչև թողարկման պահը Թողարկողի կողմից նախկինում թողարկված և շրջանառության մեջ գտնվող դոլարային պարտատոմսերի ընդհանուր անվանական ծավալի 10% (տասը) տոկոսը</p>
<p>Արժեկտրոնը՝</p>	<p>ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ</p>
<p>Շրջանառության ժամկետը՝</p>	<p>ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ</p>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ










ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ	4
ՄԱՍ 1 ԱՄՓՈՓԱԹԵՐԹ	5
1.1 Տեղեկատվություն թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ	5
1.2 Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերը	8
1.3 Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները	10
1.4 Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին տեղեկություններ	11
1.5 Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր բաժնետերերը	11
1.6 Առաջարկվող արժեթղթերի հիմնական վիճակագրական տվյալները	12
1.7 Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը	13
1.8 Վերջնական պայմանների հրապարակման ձևը	13
1.9 Ամփոփ ֆինանսական տվյալներ	14
ՄԱՍ 2 ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	18
2.3 Տեղեկատվություն՝ կապված առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) արժեթղթերի հետ	18
2.4 Առաջարկի ժամկետները և պայմանները	27
2.5 Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը	36
2.6 Լրացուցիչ տեղեկատվություն	36
ՄԱՍ 3 ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ³⁷	
3.1 Անկախ աուդիտորներ	37
3.2 Ռիսկային գործոններ	37
3.3 Տեղեկատվություն թողարկողի մասին	37
3.4 Բիզնեսի նկարագիրը	38
3.5 Թողարկողի հիմնական միջոցները	41
3.6 Զարգացման վերջին միտումները	42
3.11 Լրացուցիչ տեղեկատվություն	42

ՄԱՍ 4	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	44
4.1	ՀԱՎԵԼՎԱԾ 1: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև /իրավաբանական անձ/	44
4.2	ՀԱՎԵԼՎԱԾ 2: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև /ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր/	47
4.5	ՀԱՎԵԼՎԱԾ 5: Թողարկման պայմաններ	50
4.6	ՀԱՎԵԼՎԱԾ 6: Ֆինանսական հաշվետվություններ	55


ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք՝

<u>Հայկ Հովհիկ Եսայան</u> (անուն, ազգանուն)	<u>Ընդհանուր ժողովի մասնակից</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>22.04.2019</u> (ամսաթիվ)
<u>Ալեքսանդր Հովհիկ Եսայան</u> (անուն, ազգանուն)	<u>Ընդհանուր ժողովի մասնակից</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u> </u> (ամսաթիվ)
<u>Արամ Սուրենի Խաչատրյան</u> (անուն, ազգանուն)	<u>Ընդհանուր ժողովի մասնակից</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>22.04.2019</u> (ամսաթիվ)
<u>Գուրգեն Գագիկի Խաչատրյան</u> (անուն, ազգանուն)	<u>Ընդհանուր ժողովի մասնակից</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>21.04.2019</u> (ամսաթիվ)
<u>Արայոմ Գագիկի Խաչատրյան</u> (անուն, ազգանուն)	<u>Ընդհանուր ժողովի մասնակից</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>21.04.2019</u> (ամսաթիվ)
<u>«ԱյՅու Թելեբոյունիբեյթ» ՍՊԸ՝ ի դեմս Արթուր Մաթևոսյանի</u> (անուն, ազգանուն)	<u>Ընդհանուր ժողովի մասնակից</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>22.04.2019</u> (ամսաթիվ)
<u>Բաժնետիրական առևտրային բանկ «ՖՈՐԱ- ԲԱՆԿ» ի դեմս Սերգեյ Բալակինի</u> (անուն, ազգանուն)	<u>Ընդհանուր ժողովի մասնակից</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u> </u> (ամսաթիվ)
<u>Կարեն Մնացականյան</u> (անուն, ազգանուն)	<u>Ֆինանսական տնօրեն</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>21.04.2019</u> (ամսաթիվ)
<u>Տաթևիկ Գևորգյան</u> (անուն, ազգանուն)	<u>Գլխավոր Հաշվապահ</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>21.04.2019</u> (ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում են՝

<u>Հայկ Հովհիկ Եսայան</u> (անուն, ազգանուն)	<u>Գլխավոր տնօրեն</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>22.04.2019</u> (ամսաթիվ)
--	-----------------------------------	---	--------------------------------

ՄԱՍ 1ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ ԱՄՓՈՓԱԹԵՐԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ) ԿՐՈՒՄ ԵՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԵԹԵ ԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ Է ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՄՅՈՒՍ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ծրագրային Ազդագիրը և վերջինիս կից ներկայացվող փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակով www.ucom.am և www.armenbrok.am կայքերից:

1.1 Տեղեկատվություն թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ

1.1.1 Թողարկողի տվյալները և կապի միջոցները

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է

Հայերեն՝ «ՅՈՒԲՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Ռուսերեն՝ Общество с ограниченной ответственностью «ЮКОМ»

Անգլերեն՝ “UCOM” Limited Liability Company

Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է

Հայերեն՝ «ՅՈՒԲՈՄ» ՍՊԸ

Ռուսերեն՝ ООО “ЮКОМ”

Անգլերեն՝ “UCOM” LLC

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Տերյան 19շ, բն.4

Թողարկողի պետական գրանցման համարն է՝ 264.110.02498

Թողարկողի գործունեության վայրն է ՀՀ, ք. Երևան 0015, Գր. Լուսավորիչ 9

Կապի միջոցները՝ Հեռ.՝ (+37411) 400400

Ֆաքս՝ (+37411) 400401

Էլ. Փոստ՝ info@ucom.am

Կայք՝ www.ucom.am

Թողարկողին առնչվող հարցերի առաջացման դեպքում կարելի է դիմել «Յուբոմ» ՍՊԸ Գանձապետարանի աշխատակից Արմինե Գաբրիելյանին կապի հետևյալ միջոցներով. հեռ.՝ +37411 400 400, էլ. հասցե՝ armine.gabrielyan@ucom.am:

1.1.2 Թողարկողի համառոտ պատմությունը և ռազմավարությունը

«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Թողարկող կամ Ընկերություն) էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում իր հիմնական գործունեությունը սկսել է 2009թ.-ից՝ որպես հեռուստատեսության (IPTV), ինտերնետ կապի և թվային հեռախոսակապի ծառայություն մատուցող ընկերություն:

Ընկերությունը **2009թ.**-ին ներդրեց «օպտիկա դեպի տուն» լուծումը, որն ապահովում էր IP հեռուստատեսություն (IPTV), գերարագ ինտերնետ կապ և թվային հեռախոսակապ:

Ընկերությունը **2010թ.**-ին դարձավ ամենախոշոր մեծածախ օպերատորը Հայաստանում՝ շնորհիվ Հայաստանը Վրաստանի հետ կապող սեփական օպտիկամանրաթելային կապուղու: **2011թ.**-ին Ընկերությունն սկսեց տարանցիկ ինտերնետ մատակարարել Մերձավոր Արևելք:

2011թ.-ին Ընկերությունը ձեռք է բերում «ԱՅՔԱՆ ՔՈՄՅՈՒՆԻՔԵՅՇՆՍ» ՓԲ ընկերության 100% բաժնետոմսերը, որն ապահովում էր լայնաշերտ ինտերնետ կապ Երեւանում, օգտագործելով WiMAX տեխնոլոգիան եւ Alcatel-Lucent բազային կայանները:

2012թ.-ին Ընկերությունը ձեռք է բերում «ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԹԻՎԻ» ՍՊ ընկերության 100% բաժնեմասերը, որն ապահովում էր թվային հեռուստատեսության ծառայություններ Երեւանում:

2013թ.-ին Ընկերությունը ստացավ հանրային շարժական ինտերնետ կապի ծառայություններ մատուցելու լիցենզիա, իսկ **2015թ.**-ին ձեռք բերեց «Օրանժ Արմենիա» ՓԲ ընկերության 100% բաժնետոմսերը՝ այսպիսով մուտք գործելով նաև ՀՀ շարժական կապի շուկա: Ընկերությունը **2016թ.**-ին ՀՀ ամբողջ տարածքում գործածեց միջազգային չափանիշներին համապատասխանող 4G+ ցանցը:

2017թ. Speedtest by Ookla ընկերությունը Թողարկողին շնորհել է «Հայաստանում ամենաարագ շարժական ցանց 2017» մրցանակը:

2018թ. Ընկերությունը ընդլայնել է 4G+ ցանցը՝ ապահովելով 98,05% ծածկույթ:

Ընկերությունը շարունակաբար ամրապնդում է իր դիրքը գործունեության հիմնական շուկաներում և միևնույն ժամանակ ստեղծում եկամտի ստացման նոր հնարավորություններ՝ նորարար և տարբերակված թվային լուծումներ մշակելու միջոցով:

Գործելով խիստ մրցակցային և արագ զարգացող շուկայում, որտեղ ավանդական ձայնային և կարճ հաղորդագրությունների ծառայությունները կտրուկ անկում են ապրում, Ընկերությունը վերանայել է իր բիզնես առաջնություններն ու մոտեցումները, որոնք ուղղված են հստակ թիրախային խմբերի պահանջմունքների բավարարմանը:

1.1.3 Թողարկողի կանոնադրական կապիտալը և դրա կառուցվածքը

Թողարկողի կանոնադրական կապիտալն առ 31.12.2018թ. կազմել է 22,396,927 (քսաներկու միլիոն երեք հարյուր իննսունվեց հազար ինը հարյուր քսանյոթ) ՀՀ դրամ, որը բաժանված է թվով 7 (յոթ) բաժնեմասերի: Թողարկողի մասնակիցների ցանկը (ներառյալ բաժնեմասնակցության չափերը) ներկայացված է սույն [Շրագրային Ազդագրի 1.5 կետով](#):

1.1.4 Թողարկողի բիզնեսի նկարագիրը

Թողարկողը ՀՀ-ում ֆիքսված և շարժական կապի ծառայություններ մատուցող ընկերություն է: 2018թ.-ի 4-րդ եռամսյակի եկամտի ցուցանիշով ընդհանուր ֆիքսված ինտերնետի շուկայում Ընկերությունը զբաղեցրել է առաջատար դիրք (շուկայի 48.3%): Ընկերությունը նաև առաջատար դիրք է զբաղեցնում 2018թ.-ի 4-րդ եռամսյակի եկամտի ցուցանիշով շարժական ինտերնետի (բացառությամբ բջջային հեռախոսի միջոցով օգտվողների) շուկայում՝ շուկայի եկամտի 62.3% ցուցանիշով

Միջազգային լավագույն չափանիշներին համապատասխանող արդիականացված 4G+ և սեփական օպտիկամանրաթելային ցանցերի օգնությամբ Ընկերությունը տրամադրում է ֆիքսված և շարժական կապի ծառայությունների ամբողջական փաթեթ ավելի քան 600 հազար բաժանորդների:

Ընկերությունը պարբերաբար հանդես է գալիս նորարարական առաջարկներով.

- շարժական հեռուստատեսություն իր MediaRoom հավելվածով,
- 1 SIM-քարտում հայկական և ռուսական համար ունենալու հնարավորություն,
- U!Cloud ամպային լուծումները և այլն:

Ընկերության սպասարկման սրահները գործում են ՀՀ բոլոր մարզերում:

1.1.5 Թողարկողի կազմակերպական կառուցվածքը

Ընկերության կազմակերպական կառուցվածքը ներկայացված է [Հավելված 4](#)-ում:

1.1.6 Ակտիվները

2018թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Թողարկողի ընդհանուր ակտիվների մեծությունը, համաձայն աուդիտ չանցած հաշվետվությունների, կազմել է 115.1 մլրդ ՀՀ դրամ: Նույն պահի դրությամբ Լևերեջի գործակիցը (ընդհանուր կապիտալի հարաբերությունն ընդհանուր ակտիվներին) կազմել է 17.1%:

1.2 Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերը

1.2.1 Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Աճող մրցակցություն: Թողարկողին իր գործունեությունն իրականացնում է բարձր մրցակցային շուկաներում, որտեղ տեխնոլոգիական նորարարությունները և գնային «պատերազմները» կարող են ազդել Թողարկողի ապագա եկամուտների և շահութաբերության վրա:

Բավարար դրամական հոսքեր: Շուկայական բարձր մրցակցության և տեխնոլոգիաների դինամիկ զարգացման պայմաններում Թողարկողը կարող է չսպասել բավականաչափ դրամական հոսքեր Թողարկողի կողմից ապագայում կատարվելիք կապիտալ և գործառնական ծախսերը ֆինանսավորելու համար:

Տեխնոլոգիական փոփոխություններ: Թողարկողը ենթակա է տեխնոլոգիական փոփոխություններին առնչվող ռիսկերի, որոնք առաջ են գալիս հեռահաղորդակցման ցանցերի զարգացման, ընդլայնման և պահպանման գործընթացներում:

Նորմատիվ և օրենսդրական դաշտի փոփոխություն: Թողարկողին իր գործունեությունը ծավալում է կարգավորվող շուկաներում, ինչը կարող է ենթադրել ապագայում լրացուցիչ ծախսերի կրում կամ եկամուտ բերող գործունեության ուղղությունների սահմանափակում, որոնք կարող են ազդել Թողարկողի շուկայական մասնաբաժնի, մրցակցային դիրքի, ապագայում ստեղծվող շահույթի և դրամական հոսքերի վրա:

Մատակարարի կամ երրորդ կողմի ռիսկ: Թողարկողի գործունեությունն էապես կախված է սարքավորումների և ծառայությունների մատակարարներից, որոնք հնարավոր է, որ չկարողանան ժամանակին մատակարարել սարքավորումները և ծառայությունները, կամ դադարեցնեն մատակարարումը, կամ սահմանեն գներ, որոնք ոչ մրցակցային են:

Հաճախորդների արտահոսք: Թողարկողի գործարար պլանի իրագործումը մեծապես կախված է Թողարկողի կողմից հաճախորդների արտահոսքը կառավարելու կարողությունից: Եթե Թողարկողը չհաջողի ինչպես հարկն է վերահսկել հաճախորդների հոսքը, ապա այն կարող է բացասաբար ազդել Թողարկողի ֆինանսական ցուցանիշների վրա:

Ցանցային ընդհատումների ռիսկ: Անսպասելի ցանցային ընդհատումները, որոնք գտնվում են Թողարկողի վերահսկողությունից դուրս, կարող են խոչընդոտել Թողարկողի կողմից ծառայությունների պատշաճ մատուցմանը: Այդպիսի ընդհատումները կարող են առաջացնել մեծ ծախսեր՝ կապված նորոգման աշխատանքների հետ, ինչպես նաև ազդել հաճախորդների գոհունակության վրա՝ այդպիսով կրճատելով Թողարկողի հաճախորդների բազան, եկամուտները և վնասելով Թողարկողի համբավը:

Աշխարհաքաղաքական ռիսկեր: Աշխարհաքաղաքական, տարածաշրջանային և ներքաղաքական իրավիճակի անբարենպաստ փոփոխությունների արդյունքում հնարավոր է

առաջ գան այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ ընդհանուր մակրոտնտեսական իրավիճակի վրա, ինչն էլ կարող է հանգեցնել Թողարկողի գործունեության, հեռանկարի և ֆինանսական կատարողականի վատթարացմանը:

Փոխառու կապիտալի բարձր մակարդակ: Ընկերության ակտիվների մեծ մասը ֆինանսավորված են վարկերի և փոխառությունների հաշվին, որի արդյունքում Ընկերությունն ունի ֆինանսական լներիջի՝ ոլորտային միջին ցուցանիշից ավելի բարձր մակարդակ: Ընկերության ակտիվների՝ փոխառու կապիտալով ֆինանսավորման բարձր մակարդակը կարող է բացասաբար անդրադառնալ Ընկերության ֆինանսական վիճակի վրա:

Արտարժույթային ռիսկ: Թողարկողն ունի արտարժույթով ներգրավված վարկեր և փոխառություններ, որոնց հաշվեկշռային արժեքը, պայմանավորված արտարժույթային շուկայում փոխարժեքի տատանմանը, կարող է ենթարկվել փոփոխությունների, ինչն էլ կարող է բացասաբար ազդել Թողարկողի վարկունակության վրա:

1.2.2 Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Տոկոսադրույքի ռիսկ: Տնտեսությունում տոկոսադրույքների փոփոխությունը կարող է հանգեցնել ներդրողների կողմից Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ եկամտաբերության ցուցանիշի վերանայման, ընդ որում ընդունված է համարել, որ այլ հավասար պայմաններում պարտատոմսերի երկրորդային շուկայում պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն տոկոսադրույքների բարձրացումը այլ հավասար պայմաններում հանգեցնում է պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Շուկայական ռիսկ: Երկրորդային շուկայում Թողարկողի պարտատոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են նվազել ներքին/միջազգային տնտեսություններում տնտեսական ընթացիկ ցուցանիշների և դրանց փոփոխությունների սպասումների հետ կապված: Ներդրողը պետք է հաշվի առնի, որ արժեթղթերի գները շուկայում կարող են ժամանակի ընթացքում իջնել կամ բարձրանալ:

Վերաներդրման ռիսկ: Այն բոլոր ներդրողներն, ովքեր Թողարկողի պարտատոմսերը ձեռք կբերեն դրանք մինչև մարումը պահելու և ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությունն ապահովելու ու ստանալու համար, պետք է նկատի ունենան, որ իրենց վրա են վերցնում վերաներդրման ռիսկ, որը պայմանավորված է Թողարկողի պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտների առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդրում կատարելու հնարավորության բացակայությամբ:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները Թողարկողի պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում Թողարկողի վարկային ռիսկը (ապահովված պարտատոմսերի դեպքում այդ ռիսկը համեմատաբար ավելի ցածր է), որը կապված է ապագայում Թողարկողի

Ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, արժեկտրոնային վճարումներ իրականացնելու կամ պարտատոմսերն իրենց անվանական արժեքով մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

Արտարժույթային ռիսկ: Թողարկվող դոլարային պարտատոմսերն արտահայտված են ԱՄՆ դոլարով, իսկ դրամայինները՝ ՀՀ դրամով, և հետևապես, ներդրումները և ներդրումների ետ ստացումը (պարտատոմսերի ձեռք բերման/մարման դիմաց ստացվող գումարներ) իրականացվելու են համապատասխանաբար ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով: Ուստի, այս իմաստով արտարժույթային ռիսկն առկա է այն ներդրողների մոտ, ովքեր, իրենց դրամական միջոցները սույն պարտատոմսերում ներդնելու նպատակով, պետք է իրենց ֆինանսական միջոցները փոխարկեն այլ արժույթներից ԱՄՆ դոլարի կամ ՀՀ դրամի:

Իրացվելիության ռիսկ: Թողարկողը չի կարող երաշխավորել, որ պարտատոմսերի շրջանառության ողջ ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել պարտատոմսերը երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար տնտեսապես շահավետ գնով:

Գնաճի կամ գնողունակության ռիսկ: ՀՀ-ում գնաճի առկայության պարագայում, Թողարկողի կողմից իր պարտատոմսերի դիմաց առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը գնահատելիս ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրական եկամտաբերությունը կարող է լինել անվանական արժեկտրոնային եկամտաբերությունից ավելի ցածր (գնաճի չափով):

1.3 Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Ընկերության կողմից բնականոն գործունեություն իրականացնելու համար առկա են հետևյալ հիմնական լիցենզիաները՝

ՀՀ տարածքում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործման) համար լիցենզիա	1	Թիվ 0479, տրված 19/11/2008թ.-ին ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿ) կողմից №635Ա որոշմամբ, վավեր է մինչև 19/11/2023թ.
Հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա	2	Թիվ 186, տրված 15/10/2012թ.-ին ՀՀ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից, վավեր է մինչև 16/10/2022թ.

Ընկերության գործունեության համար առկա լիցենզիաների դիմաց յուրաքանչյուր եռամսյակ վճարվող պետական տուրքի գումարը կազմում է 525 միլիոն ՀՀ դրամ:

Թողարկողի գործունեությունը գտվում է Ընկերության մասնակիցների և գործադիր մարմնի ուշադրության ներքո, որոնք մշտապես հետևում են շուկայական իրավիճակի

փոփոխություններին՝ համապատասխանեցնելով Ընկերության գործունեությունը և զարգացման ծրագիրը շուկայի և նորագույն տեխնոլոգիաների պահանջներին:

Ընկերությունը գտնվում է խոշոր ներդրումային փուլում և գրեթե բոլոր ֆինանսական ցուցանիշներով 2018թ-ին համապատասխանել է պլանավորված բիզնես ծրագրին, նույնիսկ արձանագրել պլանավորվածից բարձր եկամտաբերություն: Ընկերությունը չունի այլ էական պարտավորվածություններ ապագայում իրականացվելիք ներդրումների գծով, որոնք սահմանված են մատակարարների հետ կնքված պայմանագրերով և արտացոլված չեն Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Ընկերությունը 2017-2019թթ-ին ընդլայնում է նաև արտերկրյա տարածքում ինտերնետի մեծածախ վաճառքը:

1.4 Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին տեղեկություններ

Թողարկողի 2016 - 2018 թթ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ը՝

ՀՀ, ք. Երևան 0010,
Վազգեն Սարգսյանի փ., 26/1 շենք, 8-րդ հարկ
Հեռ.՝ + 374 (10) 56 67 62
Ֆաքս՝ + 374 (10) 56 67 62
Կայք՝ <http://www.kpmg.am>

1.5 Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր բաժնետերերը

Թողարկողի կառավարման մարմիններն են Ընկերության մասնակիցների (կամ նրանց լիազոր ներկայացուցիչների) ընդհանուր ժողովը և գործադիր մարմինը՝ Գլխավոր տնօրենը:

Ընկերության գործադիր մարմնի կազմը ներկայացված է ստորև.

Անունը, ազգանունը	Պաշտոն	Փորձառությունը
Հայկ Հովհիկի Եսայան	Գլխավոր տնօրեն	Թողարկողի տնօրենն է 16.03.2009թ.-ից

Թողարկողի աշխատակիցների ընդհանուր թիվը կազմում է 1745 առ 28.02.2019 թ.:

Թողարկողի մասնակիցներն են՝

Մասնակիցը	Բաժնեմասը (<< դրամ)	Բաժնեմասի չափը (%)
«ԱյՅու Թելեքոմյունիքեյթ» ՍՊԸ	6,954,246	31.05
Արամ Սուրենի Խաչատրյան	5,818,721	25.98
Գուրգեն Գագիկի Խաչատրյան	2,846,649	12.71
Արտյոմ Գագիկի Խաչատրյան	2,846,649	12.71
Բաժնետիրական առևտրային բանկ «ՖՈՐԱ-ԲԱՆԿ» (բաժնետիրական ընկերություն)	2,510,696	11.21
Հայկ Հովիկի Եսայան	709,983	3.17
Ալեքսանդր Հովիկի Եսայան	709,983	3.17

Թողարկողի 31,05 տոկոս բաժնեմաս ունեցող «ԱյՅու Թելեքոմյունիքեյթ» ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնեմասը պատկանում է «ԴԱՐԻՍՈՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ –ին, որի 50 տոկոս բաժնեմասը պատկանում է Գուրգեն Գագիկի Խաչատրյանին, իսկ մյուս 50-ը Արտյոմ Գագիկի Խաչատրյանին:

1.6 Առաջարկվող արժեթղթերի հիմնական վիճակագրական տվյալները

Թողարկվող պարտատոմսերն անվանական են և ոչ փաստաթղթային, անբաժանելի են և փոխարկելի չեն:

Թողարկվող պարտատոմսերի դիմաց տոկոսային վճարումները կատարվելու են արժեկտրոնների միջոցով:

ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվում, շրջանառվում և մարվում են ԱՄՆ դոլարով, իսկ << դրամով թողարկվող պարտատոմսերը՝ << դրամով: Պարտատոմսերի սեփականատերերին արժեկտրոնային վճարումները կատարվում են << դրամով: ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների վճարման համար հիմք է ընդունվում արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող աշխատանքային օրվա համար << ԿԲ կողմից ԱՄՆ դոլարի նկատմամբ հրապարակված միջին փոխարժեքը:

Դոլարային պարտատոմսերի թողարկման դեպքում թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմում է առավելագույնը 10,000,000 (տասը միլիոն) ԱՄՆ դոլար, իսկ դրամային պարտատոմսերի դեպքում՝ առավելագույնը 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) << դրամ և նվազագույնը մինչև թողարկման պահը Թողարկողի կողմից թողարկված և շրջանառության

մեջ գտնվող դոլարային պարտատոմսերի ընդհանուր անվանական ծավալի 10% (տասը տոկոսը):

Տեղաբաշխվող (վաճառվող) պարտատոմսերի քանակը որոշվելու է Թողարկման ծավալին ու անվանական արժեքին համապատասխան:

Մեկ դոլարային պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 100 ԱՄՆ դոլար, իսկ մեկ դրամային պարտատոմսինը՝ 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտների վճարման պարբերականությունը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Թողարկման արդյունքում ներգրավված միջոցները Թողարկողն ուղղելու է Ընկերության պարտավորությունների վերաֆինանսավորմանը և կապիտալ ներդրումների իրականացմանը:

1.7 Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը

Պարտատոմսերի տեղաբաշխումն սկսելու և ավարտելու օրը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի ձեռքբերման գործընթացի մանրամասները և վաճառքի պայմանները ենթակա են հաստատման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

1.8 Վերջնական պայմանների հրապարակման ձևը

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները Թողարկողը պարտավորվում է հրապարակել առնվազն իր ինտերնետային կայքում:

1.9 Ամփոփ ֆինանսական տվյալներ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հազ. դրամ

Ցուցանիշի անվանումը	2018թ. (Աուդիտ չանցած)	2017թ. (Աուդիտ անցած)	2016թ. (Աուդիտ անցած)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	40,722,072	37,146,209	34,999,236
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	(27,155,569)	(24,152,061)	(23,538,508)
Համախառն շահույթ (վնաս)	13,566,503	12,994,148	11,460,728
Իրացման ծախսեր	(7,948,313)	(7,957,775)	(8,148,097)
Վարչական ծախսեր	(3,082,295)	(2,791,054)	(2,801,783)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	2,535,895	2,245,319	510,847
Գործառնական այլ եկամուտներ	737,436	1,638,273	1,374,180
Գործառնական այլ ծախսեր	(1,126,951)	(2,165,327)	(2,046,739)
Գործառնական շահույթ (վնաս)	2,146,381	1,718,265	(161,712)
Ֆինանսական ծախսեր	(6,013,837)	(6,426,047)	(6,964,912)
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս)	-	-	-
Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս)	-	-	-
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)	(36,907)	(274,698)	82,322
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	(3,904,363)	(4,982,480)	(7,044,303)
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)	-	-	-
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	(3,904,363)	(4,982,480)	(7,044,303)
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	6,037	1,020,171	2,457,690

Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի զծով ծախսի նվազեցումից հետո	(3,898,326)	(3,962,309)	(4,586,612)
---	-------------	-------------	-------------

ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

հազ. դրամ

Ցուցանիշի անվանումը	2018թ. (Աուդիտ չանցած)	2017թ. (Աուդիտ անցած)	2016թ. (Աուդիտ անցած)
Հիմնական միջոցներ	49,407,217	46,431,089	43,579,294
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ		-	-
Ոչ նյութական ակտիվներ	37,149,846	41,044,039	42,989,649
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ		-	-
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	5,550	14,520	21,680
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	4,411,465	5,421,179	3,583,163
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	90,974,077	92,910,827	90,173,787
Պաշարներ	951,203	1,169,078	948,036
Տրված ընթացիկ կանխավճարներ	1,440,584	1,312,508	982,365
Դեբիտորական պարտքեր վաճառքների զծով	10,630,855	12,495,653	7,183,104
Այլ դեբիտորական պարտքեր	-	-	-
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	3,427	1,927	1,888
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10,477,514	4,903,741	4,438,934
Այլ ընթացիկ ակտիվներ	660,244	878,006	2,965,224
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	24,163,828	20,760,913	16,519,550
Ընդամենը ակտիվներ	115,137,905	113,671,740	106,693,337
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	22,397	22,397	16,959
Էմիսիոն եկամուտ	-	-	-
Կուտակված շահույթ	(17,499,659)	(12,991,784)	(9,029,475)
Պահուստային կապիտալ	-	-	-
Սեփական կապիտալի այլ տարրեր	37,131,696	33,531,696	17,226,885
Ընդամենը սեփական կապիտալ	19,654,434	20,562,309	8,214,369
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	49,878,427	47,280,825	58,016,768
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	20,511,468	23,221,859	18,920,477
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	70,389,895	70,502,684	76,937,245
Կարճաժամկետ բանկային վարկեր և	9,230,789	8,000,157	3,444,918

փոխառություններ			
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	10,886,041	9,530,503	11,960,008
Ստացված ընթացիկ կանխավճարներ	1,121,423	1,237,481	2,253,286
Այլ կրեդիտորական պարտքեր	1,591,157	2,082,875	2,634,565
Այլ ընթացիկ պարտավորություններ	2,264,165	1,755,730	1,248,947
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	25,093,576	28,806,096	21,541,723
Ընդամենը պարտավորություններ	95,483,471	93,109,431	98,478,968
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	115,137,905	113,671,740	106,693,337

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

հազ. դրամ

Ցուցանիշի անվանումը	2018թ. (Աուդիտ չանցած)	2017թ. (Աուդիտ անցած)	2016թ. (Աուդիտ անցած)
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին	4,903,741	4,438,934	1,285,954
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	11,864,507	10,716,684	9,439,062
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(13,658,942)	(19,062,509)	(16,376,201)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	7,368,219	8,810,632	10,090,119
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	10,477,526	4,903,741	4,438,934

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	2018թ. (Աուդիտ չանցած)	2017թ. (Աուդիտ անցած)	2016թ. (Աուդիտ անցած)
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	կիրառելի չէ	կիրառելի չէ	կիրառելի չէ
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	-19.39%	-27.54%	-83.91%
Ակտիվների շահութաբերություն (ROA)	-3.41%	-3.60%	-4.86%
Զուտ շահույթի մարժա (NPM)	-9.57%	-10.67%	-13.10%
Կապիտալի համարժեքության գործակից	0.17	0.18	0.08
Ֆինանսական կախվածության գործակից	4.86	4.53	11.99
Բացարձակ իրացվելիության գործակից	0.42	0.22	0.21

Ընթացիկ իրացվելիության գործակից	0.90	0.83	0.59
Ընդհանուր իրացվելիության գործակից	0.96	0.92	0.77
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	3.52	3.78	5.84
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	103.64	96.68	62.50
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	1.93	2.25	2.46
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	188.92	162.39	148.52

Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են [Հավելված 3](#)-ով:

ՄԱՍ 2 ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2.3 Տեղեկատվություն՝ կապված առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) արժեթղթերի հետ

2.3.3 Արժեթղթերի ձևը

Թողարկված պարտատոմսերը ոչ փաստաթղթային են, իսկ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը կվարի «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ը (ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 26/1, Էրեբունի Պլազա բիզնես կենտրոն, 5-րդ հարկ, հեռ.՝ +(37460) 615555)(այսուհետ՝ Դեպոզիտարիա)՝ ըստ վերջինիս համապատասխան կանոնների և ընթացակարգերի:

2.3.7 Արժեթղթերից բխող իրավունքները

Պարտատոմսերից բխող իրավունքներն են.

- 1) ստանալ պարտատոմսերով նախատեսված արժեկտրոնային եկամուտները և մարման գումարը՝ ըստ Ծրագրային Ազդագրով սահմանված կարգի: ,
- 2) Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենսդրությամբ թույլատրվող գործողություններ,
- 3) Գրավադրել պարտատոմսերը օրենսդրությամբ սահմանված կարգով,
- 4) Իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը ֆոնդային բորսայում (ֆոնդային բորսայում ցուցակված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ տեքստում՝ Օրենք) սահմանված կարգով, ընդ որում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ Օրենքով արգելվում է կարգավորվող շուկայից (ֆոնդային բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթեր,
- 5) Օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

Միաժամանակ պարտատոմսի սեփականատերը պարտավոր է պարտատոմսերի թողարկման պայմաններով սահմանված ժամկետներում իրականացնել պարտատոմսերի ձեռք բերման համար անհրաժեշտ գումարների փոխանցում համապատասխան բանկային

հաշվին, կատարել պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործողություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն, ինչպես նաև կրել օրենսդրությամբ նախատեսված այլ պարտականություններ:

2.3.8 Անվանական տոկոսադրույքը և այդ տոկոսների վճարման պայմանները

Պարտատոմսերի դիմաց հաշվարկվելու և վճարվելու է արժեկտրոնային անվանական եկամուտ, որը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային անվանական եկամուտների վճարման պարբերականությունը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտը հաշվարկվելու է ԱՄՆ դոլարով, իսկ ներդրողներին վճարվելու է ՀՀ դրամով: ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների վճարման համար հիմք է ընդունվում արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող աշխատանքային օրվա համար ՀՀ ԿԲ կողմից ԱՄՆ դոլարի նկատմամբ հրապարակված միջին փոխարժեքը:

Արժեկտրոնների հաշվարկման օրերը ենթակա են որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Արժեկտրոնները պարտատոմսերի սեփականատերերին - վճարվելու (մարվելու) են արժեկտրոնների հաշվարկման օրը, իսկ անվանատիրոջը կամ վերջինիս հաշվում առկա ներդրողներին՝ հաշվարկման օրվանից հետո առավելագույնը 6 (վեց) աշխատանքային օրվա ընթացքում: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման (մարման) օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Արժեկտրոնները (տոկոսագումարները) ստանալու իրավունք ունեն պարտատոմսերի արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա վերջի դրությամբ պարտատոմսերի ռեեստրում գրանցված անձինք:

Արժեկտրոնային վճարումների համար նախատեսվող գումարներն անվանատերերին և/կամ սեփականատերերին վճարվում են մինչև 0,1 ՀՀ դրամ ճշտությամբ (ընդ որում կլորացումը իրականացվում է թվաբանական կլորացման կանոններին համաձայն՝ մինչև ամենամոտ ամբողջ տասնավոր թիվը): Թվաբանական կլորացման կանոնի ներքո հարկ է հասկանալ կլորացման այն մեթոդը, որի դեպքում միավորի ամբողջ թիվը չի փոխվում, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 0-ից 4-ի, և փոխվում է՝ մեծանալով մեկ միավորով, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 5-ից 9-ի:

Թողարկողը արժեկտրոնի գումարները վճարելու է անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով: -: Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում այդ սեփականատերերի և/կամ անվանատերերի վճարումները փոխանցելու է նոտարի դեպոզիտ մինչև սեփականատիրոջ և/կամ անվանատիրոջ կողմից համապատասխան հանձնարարականների ստացումը, ընդ որում, նոտարի դեպոզիտի ծառայության գումարը վճարվում/հատուցվում է վերջիններիս կողմից:

Արժեկտրոնի գումարի հաշվարկման համար հիմք է ընդունվում հետևյալ բանաձևը՝

$$ԱԳ = (FV \times C) / k,$$

որտեղ՝

ԱԳ-ն արժեկտրոնի գումարն է,

FV- մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,

C- տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,

k-ն մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է (արժեկտրոնների եռամսյակային վճարման դեպքում k=4):

Արժեկտրոնի կուտակումն իրականացվելու է հետևյալ բանաձևով՝

$$AI = FV \times \frac{C}{k} \times \frac{DCS}{DCC}$$

- AI – կուտակված արժեկտրոնային եկամուտն է,
- FV – մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,
- C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,
- k – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը, (արժեկտրոնների եռամսյակային վճարման դեպքում k=4),
- Օրերի հաշվարկման պայմանականությունը Թողարկողի պարտատոմսերի համար համարվում է Actual/Actual-ը, ընդ որում
 - DCS – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D2M2Y2 - D1M1Y1];
 - DCC – արժեկտրոնային փուլի օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D3M3Y3 - D1M1Y1];

- D1M1Y1 – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/ արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է;
- D2M2Y2 – գործարքի կատարման ամսաթիվն է;
- D3M3Y3 – գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:

2.3.9 Արժեթղթերի մարման ժամկետը և արժեքը

Պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Մեկ դոլարային պարտատոմսի մարման արժեքը կազմում է 100 ԱՄՆ դոլար, իսկ մեկ դրամային պարտատոմսինը՝ 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ: Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը փակվում է պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրը: Պարտատոմսերի մարման գումարն իրավունք ունեն ստանալ մինչև ռեեստրի փակման պահը պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք:

Պարտատոմսերի մարման գումարները պարտատոմսերի սեփականատերերին/անվանատերերին վճարվում են պարտատոմսերի մարման օրը: Եթե մարման օրը ոչ աշխատանքային օր է, ապա մարման գումարները վճարվում են մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը:

Թողարկողը պարտատոմսերի մարման գումարները վճարում է անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով: Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների ճիշտ չլինելու դեպքում Թողարկողը հարցում է ուղարկում Դեպոզիտարիա կամ Հաշվի օպերատորին բանկային հաշվեհամարը ճշտելու և համապատասխան փոխանցում իրականացնելու համար:

ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի մարման դիմաց վճարումները կատարվելու են համապատասխանաբար ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով:

Հաշվի առնելով պարտատոմսերի անվանական արժեքի արժույթը և պարտատոմսերի մարման հետ կապված միջբանկային փոխանցումների անհրաժեշտությունը, ներդրողները պետք է նկատի ունենան, որ մարման գումարների փոխանցման (միջբանկային փոխանցումներ) հետ կապված միջնորդավճարների ծախսերը պետք է կատարվեն ներդրողի հաշվին, հետևաբար նման դեպքերում ներդրողները մարման գումարները կստանան պահումներով՝ ըստ բանկերում /առկայության դեպքում/ գործող սակագների:

Թողարկողը պարտավոր է տեղեկացնել Դեպոզիտարիային (դիմել իրենց սպասարկող Հաշվի Օպերատորին)՝ ներկայացնելով համապատասխան հանձնարարական(ներ) պարտատոմսերի մարման վերաբերյալ:

Պարտատոմսերի մասնակի մարումներ կամ վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

2.3.11 Նոր թողարկման մասին տեղեկատվություն

Պարտատոմսերի թողարկման վերաբերյալ որոշումն ընդունվել է Թողարկողի արտահերթ Ընդհանուր ժողովի 2018թ.-ի հոկտեմբերի 19-ի որոշմամբ (Որոշում թիվ՝ 19/10): Որոշմամբ ամրագրվել է այն առավելագույն ծավալը, որի շրջանակներում Թողարկողի առանձին որոշմամբ (որոշումներով) կարող է իրականացվել պարտատոմսերի տեղաբաշխում (տեղաբաշխումներ): Պարտատոմսերի տեղաբաշխումներին վերաբերող վերջնական պայմանները հաստատված են համարվում համաձայն պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ կայացված Թողարկողի որոշման (որոշումների), այնքանով, որքանով վերջիններս չեն հակասում օրենսդրությանը:

Ընկերության մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովի 2019 թվականի մարտի 3-ի որոշմամբ Որոշման մեջ փոփոխություն է կատարվել տեղաբաշխողի փոփոխության վերաբերյալ:

2.3.12 Արժեթղթերի ազատ շրջանառելիության սահմանափակումների նկարագրությունը

Թողարկողի կանոնադրությամբ կամ պարտատոմսերի թողարկման մասին Թողարկողի համապատասխան իրավասու մարմնի որոշմամբ պարտատոմսերի թողարկման, ինչպես նաև պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ որևէ այլ սահմանափակումներ չեն սահմանվում, բացի տեղաբաշխման ընթացքում մեկ ներդրողի նկատմամբ կիրառվող ձեռք բերվող պարտատոմսերի ծավալի սահմանափակումից, եթե նման որոշում կայացվի Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի ազատ շրջանառության հետ կապված որևէ այլ սահմանափակումներ չկան՝ բացառությամբ Օրենքով և ենթաօրենսդրական ակտերով սահմանված դեպքերի:

Թողարկողը պարտադիր դիմելու է Բորսա՝ պարտատոմսերը Բորսայում ցուցակելու/առևտրին թույլտվություն ստանալու համար:

Պարտատոմսերի ցուցակման և առևտրի թույլտվություն ստանալուց հետո Կազմակերպության պարտատոմսերը չեն կարող Օրենքով սահմանված կարքով վաճառվել

կարգավորվող շուկայից դուրս, բացառությամբ ԿԲ-ի նորմատիվ իրավական ակտերով սահմանված բացառությունների՝ հետևյալ դեպքերի համար.

1. մասնավոր գործարքների համար, այն է՝ այնպիսի գործարքների, որոնց կողմերը նախապես հայտնի են, ընդ որում՝ ԿԲ խորհրդի 27 նոյեմբեր 2012 թվականի թիվ 331-Ն որոշման համաձայն՝ մասնավոր գործարքներ են համարվում՝

ա) ԿԲ-ի կողմից կնքվող գործարքները,

բ) Թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետզնման կամ ձեռքբերման գործարքները,

2.3.13 Արժեթղթերից ստացվող եկամուտների հարկումը

Կարևոր ծանուցում: Չնայած այն հանգամանքին, որ Թողարկողը, իրականացնելով իր լավագույն ջանքերը և առկա գիտելիքները, սույն բաժնում ներկայացնում է արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման մոտեցումները ՀՀ-ում, այնուամենայնիվ Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ ներդրողներն այն չպետք է համարեն հարկային խորհրդատվություն և ներդրումներ անելիս հիմնվեն միայն այս բաժնում ներկայացված նյութի վրա: Թողարկողը չի երաշխավորում, որ ներդրողի կողմից Ազդագրի ստացման և ծանոթացման պահին հարկային օրենսդրությունը կհամապատասխանի ներկայացվածին, կամ համարժեքորեն կիրառություն կունենա ՀՀ հարկային մարմինների կողմից և ցանկացած պարագայում խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվության ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով զերծ է մնում ցանկացած ներդրողի հնարավոր պահանջներից կապված հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների փոփոխության արդյունքում առաջացած լրացուցիչ ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից:

Պարտատոմսերում ներդրում կատարող անձը եկամուտ կարող է ստանալ երկու դեպքում՝

- պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսից (արժեկտրոնային եկամուտ) և
- պարտատոմսի վերավաճառքից (կապիտալի հավելված):

Տեղաբաշխվող պարտատոմսերից ստացվող եկամուտները ենթակա են հարկման ըստ հետևյալ հարկատեսակների՝

- Շահութահարկ
- Եկամտային հարկ

2.3.13.1 Պարտավորումներից ստացվող եկամտի շահութահարկով հարկման կարգը և նկարագիրը

ՀՀ-ում շահութահարկ են վճարում ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը, նոտարները, ՀՀ-ում հաշվառված, կանոնները գրանցած պայմանագրային ներդրումային ֆոնդերը (բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի և երաշխիքային ֆոնդերի), ոչ ռեզիդենտ կազմակերպությունները, ինչպես նաև մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով ՀՀ աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք:

Շահութահարկի հարկման բազա են համարվում.

1) ռեզիդենտ շահութահարկ վճարողների համար՝ հարկվող շահույթը, որը որոշվում է որպես ՀՀ Հարկային Օրենսգրքի (այսուհետ սույն բաժնում՝ Օրենսգրք) 104-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված համախառն եկամտի և Օրենսգրքի 110-րդ հոդվածով սահմանված նվազեցումների դրական տարբերություն.

2) ՀՀ-ում հաշվառված, կանոնները գրանցած ներդրումային ֆոնդերի (բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի և երաշխիքային ֆոնդերի), ինչպես նաև «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի հիման վրա ստեղծված արժեթղթավորման հիմնադրամի համար՝ զուտ ակտիվների հանրագումարը, որը որոշվում է ԿԲ-ի սահմանած և հարկային մարմնի հետ համաձայնեցրած կարգով: Սույն կետի կիրառության իմաստով՝ ներդրումային ֆոնդի զուտ ակտիվներից չեն նվազեցվում ներդրումային ֆոնդի մասնակիցներին ներդրումային ֆոնդի ակտիվներից շահաբաժնի կամ նման այլ ձևով կատարված բաշխումների գումարները.

3) մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով ՀՀ աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ կազմակերպությունների և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (այսուհետ սույն բաժնում՝ մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներ) համար՝ հարկվող շահույթը, որը որոշվում է որպես Օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված համախառն եկամտի և Օրենսգրքի 110-րդ հոդվածով սահմանված նվազեցումների դրական տարբերություն՝ հաշվի առնելով Օրենսգրքի 133-րդ հոդվածով սահմանված առանձնահատկությունները.

4) առանց մշտական հաստատության ՀՀ-ում գործունեություն իրականացնող և (կամ) առանց մշտական հաստատության ՀՀ աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ կազմակերպությունների (այսուհետ սույն բաժնում՝ առանց մշտական հաստատության ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներ) համար՝ Օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված համախառն եկամուտը.

5) մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ կազմակերպությունների՝ մշտական հաստատությանը չվերագրվող գործունեության և (կամ) եկամուտների մասով՝ Օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված համախառն եկամուտը:

Շահութահարկի դրույքաչափերը.

1. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի (մշտական հաստատությանը վերագրվող եկամուտների գծով ձևավորվող հարկման բազայի մասով) հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է 20 (քսան) տոկոս դրույքաչափով, բացառությամբ 2-րդ և 3-րդ կետերով և Օրենսգրքի 128-րդ հոդվածով սահմանված դեպքերի: Օրենսգրքի կիրառության իմաստով՝ համարվում է, որ մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի եկամուտները վերագրվում են մշտական հաստատությանը, եթե այդ եկամուտները հիմնավորող հաշվարկային փաստաթղթերը դուրս են գրվել մշտական հաստատության կողմից՝ անկախ մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի և գործարքի մյուս կողմի միջև կնքված պայմանագրերում, որպես եկամուտ ստացող, մշտական հաստատությունը նշված չլինելու հանգամանքից:

2. ՀՀ-ում հաշվառված, կանոնները գրանցած ներդրումային ֆոնդերի (բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի և երաշխիքային ֆոնդերի), ինչպես նաև «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի հիման վրա ստեղծված արժեթղթավորման հիմնադրամի հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է 0.01 (զրո ամբողջ մեկ հարյուրերորդական) տոկոս դրույքաչափով:

3. Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված՝ հարկման հատուկ համակարգերում գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերը և նոտարները գործունեության այդ տեսակների մասով շահութահարկը վճարում են ամսական 5000 (հինգ հազար) ՀՀ դրամի չափով (անկախ այն հանգամանքից, թե անհատ ձեռնարկատերը կամ նոտարը քանի հարկման հատուկ համակարգում է գործունեություն իրականացնում), որը նրանց համար գործունեության այդ տեսակների մասով համարվում է շահութահարկի գծով վերջնական հարկային պարտավորություն:

4. Առանց մշտական հաստատության ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

1) ապահովագրական հատուցումների, վերաապահովագրական վճարների և փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտների մասով՝ 5 (հինգ) տոկոս.

2) պասիվ եկամուտների մասով՝ 10 (տասը) տոկոս, բացառությամբ սույն մասի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված դեպքերի.

3) Համահայկական բանկից ստացվող շահաբաժինների մասով՝ 0 (զրո) տոկոս.

4) արժեթղթերի օտարումից ստացվող ակտիվների արժեքի հավելածի մասով՝ 0 (զրո) տոկոս.

5) ՀՀ աղբյուրներից ստացվող այլ եկամուտների մասով՝ 20 (քսան) տոկոս:

5. Եթե մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի եկամուտները չեն վերագրվում մշտական հաստատությանը, ապա այդ եկամուտների գծով ձևավորվող հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է 4-րդ կետի մասով սահմանված դրույքաչափերով: Օրենսգրքի կիրառության իմաստով՝ համարվում է, որ մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի եկամուտները չեն վերագրվում մշտական հաստատությանը, եթե այդ եկամուտները հիմնավորող հաշվարկային փաստաթղթերը դուրս չեն գրվել մշտական հաստատության կողմից՝ անկախ մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի և գործարքի մյուս կողմի միջև կնքված պայմանագրերում մշտական հաստատությունը որպես եկամուտ ստացող նշված լինելու հանգամանքից:

6. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից ՀՀ կառավարության սահմանած օՖշորային գոտիներում (երկրներում) գրանցված (հաշվառված) կազմակերպություններից ապրանքների ձեռքբերման համար այդ գոտիներում (երկրներում) գրանցված (հաշվառված) կազմակերպությանը կատարված կանխավճարների դիմաց արդյունքը կանխավճարի կատարման օրվան հաջորդող 365 օրվա ընթացքում չստացվելու դեպքում կատարված կանխավճարը դրա կատարման օրվան հաջորդող 366-րդ օրը այդ կազմակերպության համար համարվում է ՀՀ աղբյուրներից ստացվող այլ եկամուտ, որի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է 4-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված դրույքաչափով:

2.3.13.2 Պարտավորումներից ստացվող եկամտի եկամտային հարկով հարկման կարգը և նկարագիրը

ՀՀ-ում եկամտային հարկ վճարողներ են համարվում ՀՀ ռեզիդենտ և ՀՀ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը և նոտարները, որոնք եկամտային հարկ վճարողներ են համարվում միայն անձնական եկամուտների մասով (այսուհետ սույն բաժնում՝ Հարկ վճարողներ):

Եկամտային հարկի հարկման օբյեկտ է համարվում.

1) ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ ՀՀ աղբյուրներից և (կամ) ՀՀ-ից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ ՀՀ-ում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների ձեռնարկատիրական եկամուտների.

2) ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ ՀՀ աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով ՀՀ աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց մշտական հաստատությանը վերագրվող եկամուտների, ինչպես նաև արտաքին տնտեսական գործունեությունից ստացվող եկամուտների: Սույն կետի կիրառության իմաստով՝ արտաքին տնտեսական գործունեությունն ընդունվում է Օրենսգրքի 108-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված նշանակությամբ:

Եկամտային հարկի դրույքաչափերը.

Տոկոսային մասով եկամտային հարկը հաշվարկվում է տասը տոկոս դրույքաչափով:

Կապիտալի հավելածը եկամտային հարկով չի հարկվում:

Պարտատոմսերից ստացված եկամուտների հարկման կանոնները նույնն են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար:

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց, ինչպես նաև ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար որպես հարկային գործակալ հանդես է գալիս Կազմակերպությունը:

2.4 Առաջարկի ժամկետները և պայմանները

2.4.1 Առաջարկի պայմանները և վիճակագրությունը

Պարտատոմսերի տեղաբաշխման ձևը, ինչպես նաև տեղաբաշխումն սկսելու օրը ենթակա են որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Թողարկողի որոշմամբ է սահմանվում նաև տեղաբաշխման կազմակերպման եղանակը՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ-ի (Ծրագրային ազդագրում նաև՝ **Բորսա կամ ֆոնդային բորսա**) տեղաբաշխման համակարգով կամ Բորսայից դուրս:

Բորսայի տեղաբաշխման համակարգով պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվում է համաձայն Կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոնների:

Բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում գործում են առաջարկից օգտվելու հետևյալ պայմանները.

Պարտապտոմների ձեռքբերման համար կատարվող վճարումը պետք է կատարվի պարտապտոմների ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացման հիմքով, ոչ ուշ քան պարտապտոմների ձեռքբերման աշխատանքային օրվա ավարտը: Կատարվող վճարումը ուշացնելու դեպքում գումարը մնում է Տեղաբաշխողի հատուկ բացված հաշվին մինչև տեղաբաշխման ժամանակաշրջանի ավարտը և ներդրողը կարող է նոր հայտ-հանձնարարական ներկայացնել կամ հետ պահանջել իր գումարը: Ներդրողի կողմից գումարը հետ պահանջելու դիմումը ստանալուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում այն հետ է վերադարձվում ներդրողին: Պարտապտոմների ձեռքբերման համար կատարվող վճարումը համարվում է պատշաճ կերպով կատարված հատուկ այդ նպատակով բացված Տեղաբաշխողի բանկային հաշվին դրամական միջոցների մուտքագրման պահից:

Պարտապտոմների ձեռքբերման հայտ-հանձնարարական ներկայացնողները պետք է տեղյակ լինեն, որ իրենց հայտ-հանձնարարականները չբավարարվելու կամ մասնակի բավարարվելու դեպքում պարտապտոմների ձեռքբերման համար վճարված գումարների՝ հատուկ բանկային հաշվի վրա մնալը՝ մինչև պարտապտոմների թողարկման պայմանների համաձայն դրանք իրենց վերադարձնելու պահը, միջոցների ապօրինի պահում կամ դրանք վերադարձնելուց խուսափել չի հանդիսանում և դրանց վրա տոկոսներ չեն հաշվարկվում:

Բանկային փոխանցման միջոցով պարտապտոմների ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Պարտապտոմների ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացումից հետո սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները կարող են համարվել անվավեր կամ բավարարվել մասնակի:

Պարտապտոմների ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշված քանակի պարտապտոմներ ձեռք բերելու դիմաց վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$V = P \times Q, \text{ որտեղ՝}$$

- V -ն պարտապտոմների ձեռքբերման հայտում նշված քանակի պարտապտոմներ ձեռք բերելու դիմաց վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունն է:
- P -ն պարտապտոմների ձեռք բերման հայտի Տեղաբաշխողին ներկայացման օրվա դրությամբ պարտապտոմի գինն է, որը հաշվարկվում է [Ազդագրի 2.4.3.1](#) բաժնի համաձայն:
- Q -ն պարտապտոմների այն քանակն է, որը ներդրողը ցանկանում է ձեռք բերել:

2.4.1.2 Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը

Պարտատոմների տեղաբաշխման հստակ ժամանակահատվածը՝ ներառյալ տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրը, ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմների տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Թողարկողի կողմից պարտատոմսերի առաջարկը, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքում (Ֆորս մաժոր):

Եթե առկա են հետ վերադարձման ենթակա դրամական միջոցներ, ապա դրանք վերադարձվում են Թողարկողի կողմից՝ հետաձգման կամ չեղյալ հայտարարման որոշումն ընդունելուց հետո՝ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով:

Եթե Թողարկողը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է Ծրագրային Ազդագրի լրացում, որը կապված է Ծրագրային Ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա նա ներդրողի պահանջով պարտավոր է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և հետ վերադարձնել տեղաբաշխման ընթացքում նրանից ստացված միջոցները կամ հետ գնել մինչև լրացման ներկայացումը ներդրողին վաճառված արժեթղթերը՝ առնվազն նրա կողմից արժեթղթերի ձեռքբերման գնով: Սահմանված հետգնման պահանջը պետք է ներկայացվի Տեղաբաշխողին գրավոր: Հետգնման պահանջի ներկայացման ժամկետը սահմանվում է 5 (հինգ) աշխատանքային օր՝ Ծրագրային Ազդագրի լրացման հրապարակումից հետո: Արժեթղթերի հետգնումը և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցների վերադարձն իրականացվում են սահմանված պահանջը ներկայացնելուց հետո՝ առավելագույնը 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում:

2.4.1.2 կետում նշված դեպքերում տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները ներդրողներին վերադարձվում են կուտակված արժեկտրոնային եկամուտների հետ միասին: Արժեկտրոնային եկամուտը նման դեպքում հաշվարկվում է տեղաբաշխման առաջին օրվա և այն դադարեցնելու մասին որոշման կայացման օրերի միջև ընկած ժամանակամիջոցի համար:

ՀՀ ԿԲ-ն իր որոշմամբ կարող է կասեցնել պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքը՝ Օրենքի համաձայն:

Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն ՀՀ ԿԲ համաձայնությամբ՝ առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրով:

Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, տեղաբաշխումը չի շարունակվում, ապա Տեղաբաշխողը պարտավոր է կայացնել տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշում և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն արժեթղթերը ձեռք բերած անձանց Օրենքով սահմանված կարգով՝ կասեցման ժամկետի ավարտից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

2.4.1.3 Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացը

Բորսայի տեղաբաշխման համակարգով պարտատոմսերի տեղաբաշխման դեպքում ներդրողները պետք է առաջնորդվեն Բորսայի Կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով:

Բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում ներդրում կատարելու համար պետք է կատարել հետևյալ քայլերը.

Պարտատոմսերում ներդրումներ կատարող անձինք կամ նրանց անվանատերերը պարտավոր են նախքան պարտատոմսերի ձեռքբերումը Դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում ունենալ առկա սեփականատիրոջ կամ անվանատիրոջ արժեթղթերի արժեթղթերի հաշիվ:

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն և պատշաճ կերպով Տեղաբաշխողին ներկայացնեն պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պարտաստականությունը, և որով այդ պայմանները կդառնան ներդրողների համար պարտադիր:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի լրացումից և պատշաճ կերպով Տեղաբաշխողին առաքումից հետո, սակայն ոչ ուշ քան պարտատոմսերի ձեռքբերման աշխատանքային օրվա ավարտը պարտատոմս ձեռք բերել ցանկացող անձը պետք է թողարկման նպատակով Տեղաբաշխողի կողմից բացված հատուկ հաշվեհամարին կատարի վճարում պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց՝ վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծության հաշվարկային բանաձևի համաձայն:

Թողարկման նպատակով Տեղաբաշխողի կողմից բացված հատուկ հաշվեհամարին դրամական միջոցների ստացումից անմիջապես հետո Տեղաբաշխողը Դեպոզիտարիային ներկայացնում է պարտատոմսերի տեղաբաշխման հանձնարարագիր, որով արժեթղթերը հաշվագրվում են ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ արժեթղթերի հաշվին:

Թողարկման նպատակով բացված հատուկ հաշվեհամարին պարտատոմսերի տեղաբաշխման նախատեսված վերջնաժամկետից հետո ստացված գումարները ենթակա են ետ վերադարձման մեկ աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրանց համապատասխան հայտ-հանձնարարականները չեն կարող բավարարվել:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը կհամարվի պատշաճ կերպով ներկայացված Տեղաբաշխողին, եթե այն ներկայացվել է Տեղաբաշխողի հետ միայն ներքոնշյալ կապի միջոցներից որևէ մեկի միջոցով (կամ առձեռն՝ Տեղաբաշխողի գրասենյակ այցելելով) Տեղաբաշխողի հետ կապի միջոցներն են՝

- **Հասցե՝** ՀՀ, ք. Երևան, 0018, Տիգրան Մեծի 32/1, փ. 8, «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ներդրումային ընկերություն,

Կամ ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 4/7 (Յուրոմի գրասենյակ, որտեղ ներկա է լինելու Տեղաբաշխողի աշխատակիցը)

- **Էլեկտրոնային փոստ՝** armenbrok@armenbrok.com

- **CBANet հասցեն՝** Armenbrok OJSC/CBANet

Իրավաբանական անձ ներդրողների համար հայտ-հանձնարարականի ձևը ներկայացված է [Հավելված 1-ում](#): Ֆիզիկական անձ ներդրողների համար հայտ-հանձնարարականի ձևը ներկայացված է [Հավելված 2-ում](#):

Պարտավորումների ձեռքբերմանը մասնակցել ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի հայտ-հանձնարարականներ:

Պարտավորումների ձեռքբերման համար ֆիզիկական և/ կամ իրավաբանական անձինք լրացնում են հայտ-հանձնարարականում նշված դաշտերը, որոնց լրացումը պարտադիր է հայտ-հանձնարարականի վավերականությունն ապահովելու համար:

2.4.1.4 Առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորությունը

Տեղաբաշխման ընթացքում առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորություն կարող է նախատեսվել Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում տեղաբաշխման կարգով պայմանավորված՝ հնարավոր է պարտատոմսերի ձեռքբերման որևէ հայտ-հանձնարարականի և/կամ հայտ-հանձնարարականների մասնակի բավարարում:

Մասնակի բավարարման դեպք կարող է առաջանալ, երբ հայտ-հանձնարարականում նշված ձեռքբերվող պարտատոմսերի քանակը գերազանցում է հայտ-հանձնարարականը ներկայացնելու պահին առկա տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի մնացորդային քանակը:

Միաժամանակ ներկայացված հայտ-հանձնարարականների դեպքում, եթե հայտ-հանձնարարականներում նշված ձեռքբերվող պարտատոմսերի ընդհանուր քանակը գերազանցում է տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի մնացորդային քանակը, ապա սովյալ հայտ-հանձնարարականները բավարարվում են համամասնորեն՝ ըստ հայտ-հանձնարարականներում նշված ձեռքբերվող պարտատոմսերի ընդհանուր քանակում

յուրաքանչյուր հայտ-հանձնարարականով նշված ձեռքբերվող պարտատոմսերի քանակի մասնաբաժնի:

Հայտ-հանձնարարականի մասնակի բավարարման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, ապա տեղաբաշխման ավարտից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում նշված գումարը Թողարկողի կողմից ենթակա է վերադարձման, ինչն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ համապատասխան ներդրողի բանկային հաշվին փոխանցմամբ:

Բորսայի տեղաբաշխման համակարգով տեղաբաշխելու դեպքում մասնակի բավարարման դեպք ի հայտ գալու ժամանակ գումարների վերադարձն իրականացվում է համաձայն Բորսայի Կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոնների:

2.4.1.5 Հայտը հետ կանչելու ժամանակաշրջանը

, Ներդրողը կարող է հետ կանչել հայտ-հանձնարարականը մինչև տեղաբաշխման արդյունքում պարտատոմսերը ներդրողի հաշվին գրանցվելը:

2.4.1.7 Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելը

Բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձինք վճարումը կատարում են թողարկման նպատակով Տեղաբաշխողի կողմից բացված հատուկ հաշվեհամարին: Համապատասխան հայտ-հանձնարարականները բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից:

Բորսայի տեղաբաշխման համակարգով տեղաբաշխելու դեպքում պարտատոմս ձեռք բերել ցանկացող անձինք պետք է իրենց սպասարկող շուկայի մասնակցի միջոցով նախապես կատարեն դրամական միջոցների դեպոնացում:

2.4.1.9 Նախապարվության իրավունքը

Բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է ըստ պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականների և դրանց դիմաց կատարված վճարման ստացման հերթականության, այսինքն առաջնահերթություն ունի այն ներդրողը, ում հայտ-հանձնարարականի համաձայն վճարումը թողարկման նպատակով Տեղաբաշխողի կողմից բացված հատուկ հաշվեհամարին ավելի վաղ է ստացվել:

Բորսայի տեղաբաշխման համակարգով տեղաբաշխելու դեպքում պարտատոմսերի ձեռքբերման հայտերի բավարարման հերթականությունը կախված է տեղաբաշխման համար ընտրված աճուրդի եղանակից և ձևից և կարգավորվում է Բորսայի Կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով:

Թողարկվող պարտատոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեցող անձինք չկան:

2.4.2 Տեղաբաշխման պլանը

2.4.2.2 Հայտերի բավարարման մասին տեղեկացումը

Ներդրողները տեղեկացվում են իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին իրենց սպասարկող Հաշվի օպերատորից կամ պահառուից՝ արժեթղթերի հաշվից քաղվածք կամ հաշվետվություն ստանալու միջոցով:

Բորսայի տեղաբաշխման համակարգով տեղաբաշխելու դեպքում ներդրողներն իրենց հայտերի բավարարման մասին տեղեկացվում են Բորսայի Կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով սահմանված ձևով և կարգով:

2.4.3 Առաջարկի գինը

2.4.3.1 Արժեթղթերի գինը

Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$DP = \frac{C}{f} \sum_{t=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{i-1+\tau}} + \frac{100}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}}$$

որտեղ՝

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

DP - Պարտատոմսի գինն է,

DSN - գործարքի կատարման օրից (settlement/trade date) մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից (առաջին վճարման դեպքում՝ տեղաբաշխման առաջին օրից) մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է մեկ տարվա ընթացքում,

N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,

C - տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց,

Y - մինչև մարում եկամտաբերություն:

Բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում մինչև տեղաբաշխման սկիզբը տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար՝ ըստ օրերի, պարտատոմսերի վաճառքի գինը կիրառարակվի առնվազն Տեղաբաշխողի ինտերնետային կայքում:

Բանկային փոխանցման միջոցով պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Ներդրողները պարտավոր են նաև Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական արժեթղթերի հաշիվ և կրել վերջինիս հետ կապված ծախսերը:

2.4.4 Տեղաբաշխումը

2.4.4.1 Երաշխավորված տեղաբաշխում իրականացնողները

Երաշխավորված տեղաբաշխում իրականացնելու նպատկով Թողարկողը կնքել է «Արժեթղթերի մասնակի երաշխավորված տեղաբաշխման» պայմանագիր «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ի հետ

2.4.4.2 Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնողները

Համաձայն 2.4.4.1 կետում նշված պայմանագրի՝ «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ն պարտավորվել է թողարկվող ընդհանուր ծավալի մի մասի մասնակի երաշխավորված տեղաբաշխում իրականացնելուց բացի, լավագույն ջանքերի գործադրմամբ, սակայն չերաշխավորված եղանակով տեղաբաշխել Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերը դրամային և դոլարային պարտատոմսերի մնացած թողարկվող ծավալը:

2.4.4.3 Տեղաբաշխման պայմանները

Համաձայն «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ի հետ կնքած «Արժեթղթերի մասնակի երաշխավորված տեղաբաշխման» պայմանագրի՝ Թողարկողը պարտավորվել է Տեղաբաշխողին վճարել Հաստատուն վճար՝ 3,000,000.00 (երեք միլիոն) ՀՀ դրամ, որը չի ներառում անուղղակի հարկերը՝ ներառյալ ավելացված արժեքի հարկ:

2.4.4.4 Տեղաբաշխման լրացուցիչ պայմաններ

Տեղաբաշխման մնացած պայմանները՝ երաշխավորված և չերաշխավորված տեղաբաշխման ծավալները, քանակը, պարտատոմսերի տեղաբաշխման կարգը, Տեղաբաշխողին վճարման ենթակա տեղաբաշխման վճարների չափը սահմանվելու են վերջիններիս միջև համաձայնեցված տեղաբաշխման հանձնարարականներով: անձնարարականներում ներառված տեղեկատվությունը կներկայացվի Ազդագրի 1.8 կետով ներկայացված վերջնական պայմաններով:

2.4.4.5 Վճարում ընդունող բանկերը և պահառուները

Բորսայից դուրս տեղաբաշխում իրականացնելու դեպքում պարտատոմսերի դիմաց անհրաժեշտ է վճարում կատարել թողարկման նպատակով Տեղաբաշխողի կողմից բացված հաշվեհամարին: Եթե ներդրողը պարտատոմսերի ձեռքբերումը իրականացնելու է ներդրումային ծառայություններ մատուցող անձի միջոցով, ապա հարկավոր է վճարման գործընթացի մանրամասները հստակեցնել վերջինիս հետ:

Բորսայի տեղաբաշխման համակարգով տեղաբաշխելու դեպքում ներդրողներն արժեթղթերի դիմաց վճարումներ կատարում են գումարների նախնական դեպոզիտում: Եթե ներդրողը պարտատոմսերի ձեռքբերումը իրականացնելու է ներդրումային ծառայություններ մատուցող անձի միջոցով, ապա հարկավոր է վճարման գործընթացի մանրամասները հստակեցնել վերջինիս հետ:

Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումն ու (կամ) գրանցումն (սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի վարում) իրականացվելու է Դեպոզիտարիայի միջոցով, որը հանդես է գալու որպես անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրավար՝ վերջինիս համակարգում գործող որևէ Հաշվի օպերատորի միջնորդությամբ:

Պարտատոմսերը կարող են հաշվառվել նաև ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված որևէ պահառուի կողմից (Դեպոզիտարիայի ենթապահառու)՝ այդ պահառուի մոտ պարտատոմսերի սեփականատիրոջ/անվանատիրոջ համար արժեթղթերի հաշիվ բացելու և վարելու միջոցով:

Դեպոզիտարիայի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 26/1, Էրեբունի Պլազա բիզնես կենտրոն, 5-րդ հարկ (հեռ.՝ +374 60 615 555, +374 10 543 321):

Պարտատոմսերի ռեեստրի վարման Հաշվի Օպերատոր հանդիսանալու է «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ն:

2.5 Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

2.5.1 Առևտրին թույլտվությունը

Սույն Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցելուց և պարտատոմսերի տեղաբաշխումն ավարտելուց հետո Թողարկողը պարտադիր դիմելու է Բորսա՝ տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և/կամ առևտրին թույլատրելու համար: Ընդ որում պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և/կամ առևտրին թույլատրելու դիմումը կարող է չբավարարվել Բորսայի կողմից:

Արտարժույթային պարտատոմսերի առևտրի կամ ցուցակման թույլտվություն չստանալու դեպքում, տեղաբաշխումը դրանց մասով կհամարվի չեղյալ:

2.5.3 Շուկա ստեղծողները

Թողարկողը մասնագիտացված անձանց հետ դեռ չի կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի (մարքեթ մեյքերի) ծառայություններից օգտվելու վերաբերյալ պայմանագիր:

Թողարկողը պարտավորվում է մասնագիտացված անձանց հետ կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագիր տեղաբաշխումն ավարտելուց հետո:

Թողարկողը պարտավորվում է մասնագիտացված անձանց հետ երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագրի կնքումից հետո ողջամիտ ժամկետում տեղեկացնել իր պարտատոմսերի սեփականատերերին և անվանատերերին նման պայմանագրի ուժի մեջ մտնելու վերաբերյալ:

2.6 Լրացուցիչ տեղեկատվություն

2.6.1 Խորհրդատուներ

Սույն Ազդագրի պատրաստման ընթացքում Թողարկողը չի օգտվել այլ խորհրդատուների ծառայություններից, բացի Տեղաբաշխողի և «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայություններից:

ՄԱՍ 3 ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

3.1 Անկախ աուդիտորներ

Թողարկողի 2016, 2017 և 2018թթ. ֆինանսական գործունեության աուդիտն իրականացրել է (2018թ.-ի 2-րդ կիսամյակի մասով՝ իրականացնում է) «**ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ**» ՍՊԸ-ն՝

Հայաստան, ք. Երևան 0010,
Վազգեն Սարգսյանի փ., 26/1 շենք, 8-րդ հարկ
Հեռ.՝ + 374 (10) 56 67 62
Ֆաքս՝ + 374 (10) 56 67 62
Կայք՝ <http://www.kpmg.am>

3.2 Ռիսկային գործոններ

Տեխնոլոգիական փոփոխություններ: Թողարկողը ենթակա է տեխնոլոգիական փոփոխություններին առնչվող ռիսկերի, որոնք առաջ են գալիս հեռահաղորդակցման ցանցերի զարգացման, ընդլայնման և պահպանման գործընթացներում: Առկա են ռիսկեր OTT (Over-the-Top) տեխնոլոգիաներով մատուցվող ծառայությունների հետագա աճի հետ, ինչը բերում է ծայնային ծառայությունների շուկայի կրճատմանը: Զայնային ծառայությունների շուկայի տարեկան կրճատումը 2016-2017թթ կազմել է 19%, իսկ 2017-2018թթ.՝ 14.4%: Վերջինիս ազդեցությունը մեղմվում է տվյալների հաղորդման ծառայություններից պահանջարկի աճով: 2016-2017թթ-ի ընթացքում տվյալների հաղորդման ծառայությունների շուկայի աճը կազմել է 20.7%, իսկ 2017-2018թթ.՝ 19%:

3.3 Տեղեկատվություն թողարկողի մասին

3.3.2 Ներդրումները

2010թ.-ին ՀՀ-ում ինտերնետ ծառայությունների զարգացման նպատակով Ընկերությունը սկսել է օգտագործել օպտիկա-մանրաթելային ցանց, որն արտացոլում էր վերջին տեխնոլոգիական նորամուծությունները, ինչը և թույլ տվեց նվաճել FTTH (Fiber To The Home – Օպտիկա դեպի տուն) շուկան ՀՀ-ում: FTTH տեխնոլոգիան ներդրվել է՝ համագործակցելով միջազգային «Էրիքսոն» ընկերության հետ:

2015թ.-ին Ընկերությունը ձեռք բերեց «Օրանժ Արմենիա» շարժական կապի օպերատորի 100% բաժնետոմսերը:

2016թ.-ին գործարկվեց 4G+ ցանցը, որը միակն է Հայաստանում, որ ապահովում է տվյալների փոխանցման հոսքի կազմակերպումը միաժամանակ 3 հաճախականային շերտերում, երաշխավորելով ինտերնետի առավելագույն արագություն, և ընդլանվեց 3G ծածկույթը: 2016-2017թթ ընթացքում ընդհանուր շարժական կապի ընդլայնման, վերազինման և 4G+ ցանցի գործարկման համար Ընկերությունն իրականացրել է շուրջ 25.7 մլրդ դրամի ներդրում:

2017թ.-ի փետրվարի 24-ին «ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԹԻՎԻ» ՍՊԸ-ն և «ԱՅՔԱՆ ՔՈՄՅՈՒՆԻԲԵՅՇՆՆԱ» ՓԲԸ-ն վերակազմակերպվեցին՝ «ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ-ին միանալու եղանակով:

2017 թվականին կատարվել են խոշոր կապիտալ ներդրումներ ցանցի ամբողջական վերազինման նպատակով՝ օգտագործելով ավելի առաջադեմ և նոր սարքավորումներ, ինչպես նաև ծածկույթի լավացման և շարժական ցանցի արագության ավելացման նպատակով ավելացվել են նոր բազային կայաններ:

2017թ.-ին կատարվել են նաև խոշոր կապիտալ ներդրումներ նոր սերվերների, կոմուտատորների ձեռք բերման և հզորացման ուղղությամբ:

2017թ.-ին հեռահաղորդակցման շուկայում իրականացված ընդհանուր ներդրումների 49%-ը կատարվել է Ընկերության կողմից, իսկ 2016 թ.-ին՝ 66%-ը:

2018թ.-ի հունվար-հունիս ամիսներին Ընկերությունը շարունակել է իրականացնել շարժական և ֆիկսված ցանցի բարելավմանն ու վերազինմանն ուղղված ներդրումներ, բարձրացնելով ցանցի հուսալիությունը, կապուղիների թողունակությունը, ինչպես նաև կրճատելով ցանցի խափանումների հավանականությունը:

2018թ. հունիս ամսին Ընկերությունը հիմնադրել է «ՅՈՒՓԵՅ» ՓԲԸ, որի կանոնադրական կապիտալը կազմում է 200 000 000 (երկու հարյուր միլիոն) ՀՀ դրամ, իսկ Ընկերությունն էլ հանդիսանում է միակ բաժնետեր:

3.4 Բիզնեսի նկարագիրը

3.4.1 Հիմնական գործունեությունը

Ընկերությունը հանդիսանում է կապի միասնական օպերատոր, այսինքն տրամադրում է կապի և հեռահաղորդակցման միջոցների ամբողջական փաթեթ: Լինելով առաջատար

Ֆիքսված ինտերնետի շուկայում՝ տրամադրում է նաև ֆիքսված հեռուստատեսության և հեռախոսակապի ծառայություններ:

Ֆիքսված ծառայությունների շուկայում 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ձայնային ծառայություններից օգտվող բաժանորդների քանակը կազմել է 56.307, իսկ ինտերնետ հասանելիության ծառայություններից օգտվող բաժանորդների քանակը՝ 104,356: : Նույն ցուցանիշները 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են համապատասխանաբար 51,694 և 96,312, իսկ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ համապատասխանաբար 46,677 և 83,630:

Ընկերությունը գործունեություն է ծավալում նաև շարժական կապի ոլորտում՝ առաջարկելով ձայնային և ինտերնետ ծառայություններ:

Շարժական կապի ցուցանիշների գծով ակտիվ բաժանորդային համարների քանակը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կանխավճարային բաժանորդագրությամբ բաժանորդների գծով կազմել է 314,408 (2017թ.՝ 307,142, իսկ 2016թ.՝ 327,973), հետվճարային բաժանորդագրությամբ բաժանորդների գծով՝ 126,929 (2017թ.՝ 127,727, իսկ 2016թ.՝ 133,265), լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդների գծով՝ 132,971 (2017թ.՝ 131,054, իսկ 2016թ.՝ 127,648):

Ընկերության հասույթը հիմնականում ձևավորվում է երկու ուղղություններով՝ ապրանքների վաճառքից և ծառայությունների մատուցումից:

Ապրանքների վաճառքից հասույթում ներառված են բջջային հեռախոսների, աքսեսուարների, պլանշետների, Wi-Fi սարքերի, հեռակառավարման վահանակների վաճառքից ստացված հասույթները:

Ընկերությունը բջջային սարքավորումները վաճառում է ինչպես մանրածախ, այնպես էլ ապառիկ՝ ամսական վճարումներով:

Ծառայությունների մատուցումից հասույթն իր մեջ ներառում է հիմնականում հետևյալ ծառայության խմբերից ստացված հասույթները՝

- **Ֆիքսված կապի ծառայություններ**

Ֆիքսված կապի ծառայություններն իրենց հերթին բաժանվում են ֆիքսված լայնաշերտ և անլար ինտերնետի, թվային հեռուստատեսության, վերգետնյա թվային հեռախոսակապի: Նշված ծառայություններից օգտվում են ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք:

- **Շարժական կապի ծառայություններ**

Շարժական կապի ծառայությունների խմբերն են՝ կանխավճարային և հետվճարային բաժանորդագրությամբ բաժանորդներին մատուցվող (բացառությամբ շարժական ինտերնետի) ծառայություններ, շարժական ինտերնետը և ռոումինգ ծառայությունները:

- **IP ու տվյալների փոխանցման ծառայություններ**

- **Միջազգային փոխկապակցման ծառայություններ**

Ընկերության հասույթի կառուցվածքը 2018թ.-ի դրությամբ ունի հետևյալ տեսքը՝ շարժական կապի ծառայություններից հասույթի տեսակարար կշիռն ընդհանուր հասույթի մեջ կազմում է 38% (2017թ.՝ 41%, 2016թ.՝ 48%), ֆիքսված կապի ծառայություններից հասույթը՝ 36% (2017թ.՝ 35%, 2016թ.՝ 35%), IP ու տվյալների փոխանցման ծառայություններից հասույթը՝ 17% (2017թ.՝ 16%, 2016թ.՝ 12%), ապրանքների վաճառքից հասույթը՝ 9% (2017թ.՝ 8%, 2016թ.՝ 5%):

3.4.1.3 Ընկերության արժեքները

Ընկերությունն իր առջև դրված նպատակները նվաճելու համար որդեգրել է հետևյալ արժեքները.

- Հոգատարություն և պատասխանատվություն

- արագորեն արձագանքելով բաժանորդի կարիքներին
- ապահովելով բաց, ազնիվ և հաճախակի շփում

- Թիմային աշխատանք

- լինելով բաց և արդյունավետ
- կիսվելով գաղափարներով, հաջողություններով և զարգացմամբ

- Բաժանորդամետ մոտեցում

- ապահովելով բարձրորակ ծառայություններ
- գերազանցելով բաժանորդների ակնկալիքները

- Նորարարություն և դինամիկա

- փոխելով բաժանորդների կյանքը տանն ու աշխատավայրում
- լինելով նորարարական և տեխնոլոգիական առաջատար Հայաստանում

Ընկերությունը վստահ է, որ այսպիսի մշակույթ զարգացնելով՝ կհաջողի ստեղծել ամենանորարար, տեխնոլոգիապես առաջատար և հաճախորդամետ հեռահաղորդակցության օպերատորի նկարագիրը Հայաստանում:

2016-2018թթ. Ընկերությունն ակտիվ գործունեություն է ծավալել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության տեսանկյունից և նպաստել է ՏՀՏ ոլորտի զարգացմանը՝ կյանքի կոչելով, մասնավորապես, կրթության ոլորտի և երեխաների զարգացմանն ուղղված մի շարք ծրագրեր: Թողարկողի աջակցությամբ ՀՀ դպրոցներում բացվել են համակարգչային և ինժեներական լաբորատորիաներ:

3.4.2 Հիմնական շուկաները

3.4.2.2 Մրցակցային դիրքը

Ինտերնետ կապի շուկայում Ընկերությունը մրցակցում է Բիլայն («ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ), Ռոստելեկոմ («ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ) և Վիվասել-ՄՏՍ («ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ) ընկերությունների հետ: 2018թ.-ի 4-րդ եռամսյակի եկամտի ցուցանիշով ընդհանուր լայնաշերտ ինտերնետ շուկայում (շարժական (բացառությամբ բջջային հեռախոսի միջոցով օգտվողների) և ֆիքսված լայնաշերտ ինտերնետի շուկաները միասին) Ընկերությունը զբաղեցրել է առաջատար դիրք (շուկայի 52.1%):

Ֆիքսված ձայնային կապի շուկայում Ընկերությունը մրցակցում է Բիլայն («ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ) և Ռոստելեկոմ («ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ) ընկերությունների հետ, որոնք 2018թ.-ի 4-րդ եռամսյակի արդյունքներով ըստ եկամուտների զբաղեցնում են համապատասխանաբար 1-ին (89.5%) և 3-րդ (2.5%) տեղերը: 2018թ.-ի 4-րդ եռամսյակի արդյունքներով Ընկերությունն այս շուկայում ըստ եկամուտների զբաղեցնում է 2-րդ տեղը ունենալով շուկայի 8 տոկոս մասնաբաժինը:

Ընդհանուր շարժական կապի և հարակից ծառայությունների շուկայում Ընկերությունը մրցակցում է Վիվասել-ՄՏՍ («ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ) և Բիլայն («ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ) ընկերությունների հետ: Ընկերությունը շուկայում ըստ եկամուտների զբաղեցնում է 3-րդ տեղը 2018թ.-ի 4-րդ եռամսյակում ունենալով շուկայի 19.0% մասնաբաժինը (2017թ.-ի 4-րդ եռամսյակում նույն ցուցանիշը կազմել է 18.8%):

Ըստ 2018թ.-ի 4-րդ եռամսյակի արդյունքների՝ շարժական կապի շուկայի ձայնային հատվածում Ընկերությունը ըստ եկամտի մասնաբաժնի 3-րդն էր (22%), իսկ ինտերնետի (բացառությամբ հեռախոսի միջոցով օգտագործվող ինտերնետի) հատվածում՝ 1-ինը (62.3%):

3.5 Թողարկողի հիմնական միջոցները

Հիմնական միջոցներն առ 31/12/18թ.	Զուտ հաշվեկշռային արժեքը (հազար ՀՀ դրամ)
Ցանցային ենթակառուցվածքներ	30,645,845
Սարքավորումներ	16,142,389
Վարձակալված ՀՄ-ներ	365,773
Շենքեր և հողամասեր	832,937
Տրանսպորտային միջոցներ	231,608

Հիմնական միջոցներն առ 31/12/18թ.	Զուտ հաշվեկշռային արժեքը (հազար ՀՀ դրամ)
Արտադրական գույք, տնտեսական գույք	246,196
Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցներ	942,469
Ընդամենը	49,407,217

3.6 Զարգացման վերջին միտումները

Ընկերությունը շարունակաբար աճում է ինտերնետի մատակարարման մանրածախ և մեծածախ շուկաներում՝ մեծացնելով մասնաբաժինը մանրածախ շուկայում և գրավելով նոր գործընկերներ մեծածախ շուկայում:

Ձայնային շուկայի ծառայությունների ոլորտում Ընկերությունը հանդես է գալիս նորարարական լուծումներով՝ բաժանորդներին առաջարկելով հարմար և ամբողջական ծառայություններ: Ընկերությունը, շարունակաբար ընդլայնելով կապի ծածկույթը, ծառայությունները դարձնում է որակյալ և հասանելի ամենուր:

Ընկերության հասույթը 2018թ-ին կազմել է շուրջ 40.7 մլրդ դրամ՝ 2017թ.-ի համեմատ աճելով 3.6 մլրդ դրամով կամ 9.6%-ով: 2018թ.-ին գործառնական ծախսերը առանց ամորտիզացիոն մասնահանումների կազմել են 28.1 մլրդ դրամ՝ 2017թ.-ի համեմատ ավելանալով ընդամենը 9.3%-ով:

3.11 Լրացուցիչ տեղեկատվություն

3.11.1 Կանոնադրական կապիտալը

3.11.1.1 Կանոնադրական կապիտալի մեծությունը

Թողարկողի կանոնադրական կապիտալն առ 31.12.2018թ. կազմում է 22,396,927 (քսաներկու միլիոն երեք հարյուր ինսունվեց հազար ինը հարյուր քսանյոթ) ՀՀ դրամ: 2018թ.-ի մայիս ամսին Ընկերությունը սկսել է նոր մասնակցի ներգրավման գործընթաց, որի արդյունքում ընկերությունը նոր մասնակցից հունիս ամսին ստացել է 3.6 մլրդ դրամի բաժնեմասնակցային ներդրում, որի արդյունքում Ընկերության կանոնադրական կապիտալը կավելանա 1,506,520 (մեկ միլիոն հինգ հարյուր վեց հազար հինգ հարյուր քսան դրամ) ՀՀ դրամ գումարով և կկազմի 23,903,447 (քսաներեք միլիոն ինը հարյուր երեք հազար չորս հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամ: Կանոնադրության մեջ համապատասխան փոփոխության իրականացումը գտնվում է գրանցման փուլում:

3.11.1.2 Թողարկված բաժնետոմսերի (բաժնեմասերի) քանակը

Թողարկողի կանոնադրական կապիտալը բաժանված է 7 մասնակիցների միջև ստորև ներկայացված մասնաբաժիններով.

Մասնակիցը	Բաժնեմասը (<< դրամ)	Բաժնեմասի չափը (%)	Բաժնեմասը նոր մասնակցի գրանցումից հետո (<< դրամ)	Բաժնեմասի չափը նոր մասնակցի գրանցումից հետո (%)
«ԱյՅու Թելեքոմյունիքեյթ» ՍՊԸ	6,954,246	31.05	6,954,246	29.09
Արամ Սուրենի Խաչատրյան	5,818,721	25.98	5,818,721	24.34
Գուրգեն Գագիկի Խաչատրյան	2,846,649	12.71	2,846,649	11.91
Արտյոմ Գագիկի Խաչատրյան	2,846,649	12.71	2,846,649	11.91
Բաժնետիրական առևտրային բանկ «ՖՈՐԱ-ԲԱՆԿ» (բաժնետիրական ընկերություն)	2,510,696	11.21	2,510,696	10.51
Հայկ Հովիկի Եսայան	709,983	3.17	709,983	2.97
Ալեքսանդր Հովիկի Եսայան	709,983	3.17	709,983	2.97
Սուրիկ Սիրակի Պողոսյան	-	-	1,506,520	6.30

ՆԵՐԴՐՈՂԸ, ԾԱՆՈԹԱՆԱԼՈՎ ՍՈՒՅՆ ԱԶԴԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆԸ, ՊԵՏՔ Է ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԻ ՏՎՅԱԼ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՌԻՍԿԸ՝ ՄԻՆՉԵՎ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ:

ՄԱՍ 4 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

4.1 ՀԱՎԵԼՎԱԾ 1: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև /իրավաբանական անձ/

«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման
հայտ-հանձնարարականի օրինակելի ձև
(իրավաբանական անձանց համար)

Թողարկող Issuer	
Թողարկման արժույթը Currency of denomination	
Թողարկվող պարտատոմսերի ընդհանուր քանակը Total number of issued bonds	
Թողարկվող պարտատոմսերի ԱՄՏԾ ISIN of issued bonds:	
Արժեկտրոնային եկամտաբերությունը Coupon yield	
Մեկ պարտատոմսի ձեռքբերման գինը Price per unit	
Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը Number of purchasing bonds Գործարքի ծավալը (ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար) Transaction volume (AMD/USD)	

Ներդրողի վերաբերյալ տեղեկություններ

Investor Information

Իրավաբանական անձի անվանումը Company name	
Քրանցման տվյալներ Registration details	
Իրավաբանական հասցեն Legal address	
ՀՎՀՀ Tax Code	
Կապի միջոցները (հեռ., էլ. փոստ) Contact details (tel., e-mail)	
Արժեթղթերի հաշվի տվյալները Securities account details	
Բանկային տվյալները Bank details	ՀՀ դրամ/ AMD ԱՄՆ դոլար/USD
Իրավաբանական անձի ներկայացուցչի կամ լիազորված անձի անուն ազգանունը, պաշտոնը Full name, position of the authorized person of legal entities	

Լրացվում է տեղաբաշխողի լիազորված աշխատակցի կողմից
For use by the authorized employee of the underwriter

Հայտի ստացման ամսաթիվ
Receive date

օր, ամիս, տարեթիվ / day, month, year ժամ, րոպե / hour, minute

Վճարման ամսաթիվ
Payment date

օր, ամիս, տարեթիվ / day, month, year

Սույնով, հավաստում եմ, որ ձեռքբերման հայտը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող «ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ծրագրային ազդագրին, ընդունում և համաձայն եմ դրանում նշված պայմաններին, ստանձնում եմ այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:/

We hereby acknowledge that before submitting this subscription order we have reviewed the Prospectus of the public offering of bonds of UCOM LLC, which forms an integral part of this order. We hereby accept and agree to the terms and conditions thereof and assume the responsibilities and possible risks of investing in these bonds.

Հաստատում եմք, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են պարտատոմսերի գնման նպատակով ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու հետ: /

We confirm that the funds transferred for the purposes of buying the bonds have been acquired in a lawful manner and are in no way linked to terrorism financing, drug trafficking, human trafficking, and tax evasion.

Հաստատում եմք, որ սույն հայտ-հանձնարարականի բավարարման դեպքում հայտ-հանձնարարականը կհանդիսանա մեր և «ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ «ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ թողարկած պարտատոմսերի՝ մեր կողմից ձեռքբերման (առքի) վերաբերյալ: /

We agree that in case this order is satisfied, it shall constitute a properly executed and valid contract between us and UCOM LLC on our acquisition (purchase) of bonds issued by UCOM LLC.

ԾԱՆՈՒՑՈՒՄ: ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՉԵՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ: /
NOTIFICATION: THE INVESTMENTS IN THESE SECURITIES ARE NOT GUARANTEED BY THE MEANS OF THE DEPOSIT GUARANTEE FUND.

4.2 **ՀԱՎԵԼՎԱԾ 2:** Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև
/Ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր/

«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման
հայտ-հանձնարարականի օրինակելի ձև
(Ֆիզիկական անձանց համար)

Թողարկող Issuer	
Թողարկման արժույթը Currency of denomination	
Թողարկվող պարտատոմսերի ընդհանուր քանակը Total number of issued bonds	
Թողարկվող պարտատոմսերի ԱՄՏԾ ISIN of issued bonds:	
Արժեկտրոնային եկամտաբերությունը Coupon yield	
Մեկ պարտատոմսի ձեռքբերման գինը Price per unit	
Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը Number of purchasing bonds	
Գործարքի ծավալը (ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար) Transaction volume (AMD/USD)	

Ներդրողի վերաբերյալ տեղեկություններ
Investor Information

Անուն, ազգանուն Full name	
Անձնագրի տվյալներ Passport details	
Բնակության հասցեն Residence address	
Կապի միջոցները (հեռ., էլ. փոստ) Contact details (tel., e-mail)	
Արժեթղթերի հաշվի տվյալները Securities account details	
Բանկային տվյալները Bank details	ՀՀ դրամ/ AMD ԱՄՆ դոլար/USD

Լրացվում է տեղաբաշխողի լիազորված աշխատակցի կողմից
For use by the authorized employee of the underwriter

Հայտի ստացման ամսաթիվ
Receive date

 օր, ամիս, տարեթիվ / day,
 month, year

 ժամ, րոպե / hour, minute

Վճարման ամսաթիվ
Payment date

 օր, ամիս, տարեթիվ / day,
 month, year

Սույնով, հավաստում եմ, որ ձեռքբերման հայտը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող «ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ծրագրային ազդագրին, ընդունում և համաձայն եմ դրանում նշված պայմաններին, ստանձնում եմ այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:/

We hereby acknowledge that before submitting this subscription order we have reviewed the Prospectus of the public offering of bonds of UCOM LLC, which forms an integral part of this order. We hereby accept and agree to the terms and conditions thereof and assume the responsibilities and possible risks of investing in these bonds.

Հաստատում ենք, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են պարտատոմսերի գնման նպատակով ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու հետ: /

We confirm that the funds transferred for the purposes of buying the bonds have been acquired in a lawful manner and are in no way linked to terrorism financing, drug trafficking, human trafficking, and tax evasion.

Հաստատում ենք, որ սույն հայտ-հանձնարարականի բավարարման դեպքում հայտ-հանձնարարականը կհանդիսանա մեր և «ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ «ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ թողարկած պարտատոմսերի՝ մեր կողմից ձեռքբերման (առքի) վերաբերյալ: /

We agree that in case this order is satisfied, it shall constitute a properly executed and valid contract between us and UCOM LLC on our acquisition (purchase) of bonds issued by UCOM LLC.

ԾԱՆՈՒՑՈՒՄ: ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՉԵՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ: /
NOTIFICATION: THE INVESTMENTS IN THESE SECURITIES ARE NOT GUARANTEED BY THE MEANS OF THE DEPOSIT GUARANTEE FUND.

4.5 ՀԱՎԵԼՎԱԾ 5: Թողարկման պայմաններ

..... 201_թ.

Յուրոմ ՍՊԸ

անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի պարտատոմս

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված է ----- 201_թ.), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են ԱՐՄԵՆԲՐՈԿ ԲԲԸ-ում ՀՀ, 0018, ք. Երևան, Տիգրան Մեծի 32/1, տ. 8 հասցեում և ՅՈՒԲՈՄ ՍՊԸ-ում ՀՀ, ք. Երևան, Գր. և Կոմ. պալատի 9, 0015, հասցեում:

Ընդհանուր տեղեկություններ (Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)		
1.	Թողարկողը (թողարկողի անվանումը)	“ՅՈՒԲՈՄ” ՍՊԸ
2.	Երաշխավորողը	
3.	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը)	
4.	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	Ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
5.	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	Ամենայն մանրամասնությամբ ներկայացված է Ծրագրային Ազդագրի 2.3.6 մասում
6.	Թողարկման արժույթը	ԱՄՆ դոլար կամ ՀՀ դրամ
7.	Առաջարկի գինը	Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ՝

		$DP = \frac{C}{f} \sum_{t=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{i-1+\tau}} + \frac{100}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}}$ <p>որտեղ՝</p> $\tau = \frac{DSN}{DCC}$ <p>DP - Պարտատոմսի գինն է, DSN - գործարքի կատարման օրից (settlement/trade date) մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում, DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից (առաջին վճարման դեպքում տեղաբաշխման առաջին օրից) մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում, f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (4- եռամսյակային վճարումների համար), N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը, C - տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց, Y - մինչև մարում եկամտաբերություն:</p> <p>Տեղաբաշխման ընթացքում պարտատոմսի լրիվ գինը յուրաքանչյուր օրվա համար հրապարակվում է Թողարկողի և Տեղաբաշխողի կայքերում</p>
8.	Անվանական արժեքը	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար կամ 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
9.	Քանակը	համապատասխան Թողարկման ծավալի ու անվանական արժեքի, այսինքն Թողարկման ծավալի հարաբերությունը անվանական արժեքին
10.	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
11.	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
12.	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	

13.	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	Թողարկողի Ընդհանուր արտահերթ ժողովի 2018թ հոկտեմբերի 19-ի նիստի թիվ 19/10 որոշում
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
14.	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	Ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
15.	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լրղացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն	Ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
16.	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	Ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
17.	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում/Փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual)
18.	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	Ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
19.	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	Ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
20.	Զրոյական արժեկտրոնով (գեղջատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	Ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ		
21.	Մարման ժամկետը	Ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը

		որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
22.	Մարման արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար կամ 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
23.	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	ոչ կիրառելի
24.	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
	3) Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	
	Այլ տեղեկություններ	
25.	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փուօ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
	3) Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	
Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
26.	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	ԱՐՄԵՆԲՐՈԿ ԲԲԸ ՀՀ, 0018, ք. Երևան, Տիգրան Մեծի 32/1, տ. 8
27.	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում)	ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Այլ տեղեկություններ		
28.	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության	Արժեթղթերը դեռ չեն թույլատրված կարգավորվող շուկայում առևտրի

	ամսաթիվը)	
29.	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու համար տեղաբաշխումն ավարտվելուց հետո առավելագույնը 3 (երեք) ամսվա ընթացքում, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում: Կարգավորվող շուկա ասելով Թողարկողը նկատի ունի “ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ” ԲԲ ընկերությունը:
30.	Արժեթղթի վարկանիշը	Արժեթղթերը վարկանշված չեն
31.	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	Ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

Թողարկողը պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար: Թողարկողը հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

_____ (անուն, ազգանուն)

_____ (պաշտոն)

_____ (ստորագրություն)

_____ (ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում եմ՝

Գլխավոր տնօրեն

_____ (անուն, ազգանուն)

_____ (պաշտոն)

_____ (ստորագրություն)

_____ (ամսաթիվ)

Կ.Տ.

4.6

ՀԱՎԵԼՎԱԾ 6: Ֆինանսական հաշվետվություններ**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

հազ. դրամ

Ցուցանիշի անվանումը	2018թ. (Աուդիտ չանցած)	2017թ. (Աուդիտ անցած)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	40,722,072	37,146,209
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	(27,155,569)	(24,152,061)
Համախառն շահույթ (վնաս)	13,566,503	12,994,148
Իրացման ծախսեր	(7,948,313)	(7,957,775)
Վարչական ծախսեր	(3,082,295)	(2,791,054)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	2,535,895	2,245,319
Գործառնական այլ եկամուտներ	737,436	1,638,273
Գործառնական այլ ծախսեր	(1,126,951)	(2,165,327)
Գործառնական շահույթ (վնաս)	2,146,381	1,718,265
Ֆինանսական ծախսեր	(6,013,837)	(6,426,047)
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս)	-	-
Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս)	-	-
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)	(36,907)	(274,698)
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	(3,904,363)	(4,982,480)
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)	-	-
Ձուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	(3,904,363)	(4,982,480)
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	6,037	1,020,171
Ձուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	(3,898,326)	(3,962,309)

Գլխավոր տնօրեն

Գլխավոր հաշվապահ



Հայկ Եսայան

Տաթևիկ Գևորգյան

ԱՄՓՈՓ ՀԱԵՎԱԴԱՎԱԿԱՆ ՀԱԵՎԵԿԵՒՈՒ

հազ. դրամ

Ցուցանիշի անվանումը	2018թ. (Առաջիկա չանցած)	2017թ. (Առաջիկա անցած)
Հիմնական միջոցներ	49,407,217	46,431,069
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	-	-
Ոչ նյութական ակտիվներ	37,149,846	41,044,039
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	-	-
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	5,550	14,520
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	4,411,465	5,421,179
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	90,974,077	92,910,827
Պաշարներ	951,203	1,169,078
Տրված ընթացիկ կանխավճարներ	1,440,584	1,312,508
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	10,630,855	12,495,653
Այլ դեբիտորական պարտքեր	-	-
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	3,427	1,927
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10,477,514	4,903,741
Այլ ընթացիկ ակտիվներ	660,244	878,006
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	24,163,828	20,760,913
Ընդամենը ակտիվներ	115,137,905	113,671,740
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ զուճար	22,397	22,397
Էմիսիոն եկամուտ	-	-
Կուտակված շահույթ	(17,499,659)	(12,991,784)
Պահուստային կապիտալ	-	-
Սեփական կապիտալի այլ տարրեր	37,131,696	33,531,696
Ընդամենը սեփական կապիտալ	19,654,434	20,562,309
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	49,878,427	47,280,825
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	20,511,468	23,221,859
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	70,389,895	70,502,684
Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	9,230,789	8,000,157
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	10,886,041	9,530,503
Ստացված ընթացիկ կանխավճարներ	1,121,423	1,237,481
Այլ կրեդիտորական պարտքեր	1,591,157	2,082,875
Այլ ընթացիկ պարտավորություններ	2,264,165	1,755,730
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	25,093,576	28,806,096
Ընդամենը պարտավորություններ	95,483,471	93,109,431
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	115,137,905	113,671,740

Գլխավոր տնօրեն

Գլխավոր հաշվապահ



Հայկ Եսայան

Տաթևիկ Գևորգյան

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՒՔԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

հազ. դրամ

Ցուցանիշի անվանումը	2018թ. (Աուդիտ չանցած)	2017թ. (Աուդիտ անցած)
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին	4,903,741	4,438,934
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր	11,864,507	10,716,684
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր	(13,658,942)	(19,062,509)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր	7,368,219	8,810,632
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	10,477,526	4,903,741

Գլխավոր տնօրեն

Գլխավոր հաշվապահ



Հայկ Եսայան

Տարևիկ Գևորգյան